



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

262.4

Ա-89

Handwritten scribbles

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ

ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՐԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ

Ա.—1917 Փետրուար 18

Բ.—1917 Յուլիս 29

Գ.—1918 Ապրիլ 7—8

1919

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊՈՍԹՈՆ

ՀԱՅԿԱՊԵՅՈՒՏ

ՕՐԻՆԱԿ

262.4
Ա - 89

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ

Ա. — 1917 Փետրուար 18

Բ. — 1917 Յուլիս 29

Գ. — 1918 Ապրիլ 7—8

1919

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊՈՍԹՈՆ



4229

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Ա.

51381

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
1917 ՓԵՏՐՈՒԱՐ 18
ՈՒՍՏՐ, ՄԷՍ.

~~4248~~ ✓
~~6549-64~~

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Ա.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
1917 ՓԵՏՐ. 18*)

ՆԻՍՏ Ա.

1. ԲԱՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ
ԻՆԲՆՈՒԹԵԱՆ, ԸՆՏՐՈՈՒԹԻՒՆ ԳԻՒԱՆԻ
ԵՒ ՕՐԱԿԱԳԻ ԽՆԴԻՐ

Ամեր. Ազգ. Կեդր. Վարչութեան Դիւանին հրա-
ւէրով՝ Ամերիկահայ Երեսփոխանական Ժողովը դու-
մարուեցաւ Ուսարի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Ազգ. Ժո-
ղովասրահը, նախագահութեամբ Գեր. Առաջնորդ
Հօր եւ ներկայութեամբ 19 Թեմերէ ընտրուած 55 Ե-
րեսփոխաններու :

(*) Այս Արձանագրութիւնը վաւերացուեցաւ
1917 Յուլիս 29ի Երեսփոխանական Ժողովոյ առաջին
Նիստին մէջ :

Նիստը բացուեցաւ Նախագահ Տ. Արսէն Վրդ. Վեհուկի աղօթքով, ժամը 12.30ին, կէսօրէն ետքը, եւ մինչեւ Դիւանի կազմութիւնը՝ ժողովը վարելու գործը յանձնուեցաւ Կեդր. Վարչութեան Դիւանին:

Վարչութեան Ատենադպիր Տիար Մ. Գ. Պէրպէրեան կարգաց երեսփոխաններու հետեւեալ ցանկը.

ՈՒՍՏՐԻ ԹԵՄԷՆ

1. Գեղամ Միքրօեան
2. Մինաս Ջամանիկեան
3. Առաքել Եաղրճեան
4. Պօղոս Ճորճորեան

ՊՈՍԹՈՆԻ ԹԵՄԷՆ

5. Տ. Մուշեղ Արքեպոս. Սերոբեան (բացակայ)
6. Միհրան Սվաղլեան
7. Ովսիա Երամեան
8. Դաւիթ Ղուկասեան

ՓՐԱՎԻՏԷՆՍԻ ԹԵՄԷՆ

9. Տ. Վաղարշակ Ծ. Վ. Արշակունի
10. Ջաքար Դանիէլեան ~~x~~
11. Պապա Խալընեան ~~x~~
12. Նշան Բաշալեան
13. Աւետիս Տէրոյենց ~~x~~
14. Աւետիս Կէօլճիքեան
15. Մելքոն Ռստիկեան
16. Թորոս Վարդանեան
17. Արամ Նալպանդեան

18. Համբարձում Շարօեան

19. Վարդան Մամիկոնեան

ԼՕՐԷՆՍ—ԼՕՎԷԼԻ ԹԵՄԷՆ

20. Տ. Եղիշէ Քհնյ. Գալչընճեան

21. Մարկոս Տէր Մանուէլեան

22. Շմաւոն Մինասեան

23. Սերոբ Տէրաէրեան

ԹՐՕՅԻ ԹԵՄԷՆ

24. Տ. Մամբրէ Քհնյ. Բելթիկեան (Փոխանորդ
Տ. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեանի)

25. Մինաս Հայրապետեան

ՈՒԷՍԹ ՆՕՊՕՔԸՆԻ ԹԵՄԷՆ

26. Յով. Եաղճեան (Փոխանորդ Տ. Սերովրէ
Քհնյ. Ներշապուհի)

27. Տիգրան Վարդանեան

28. Տիգրան Աղամեան

29. Կարապետ Չանդալեան

30. Հայկ Սըմսարեան

ՆԻԻ ԵՈՐՔԻ ԹԵՄԷՆ

31. Տ. Մատթէոս Քհնյ. Մանիկեան

32. Գարեգին Երկանեան

33. Հրաչեայ Գամպուրեան

34. Հրաչեայ Հողկրողեան

ՖԻԼՍՏԷԼՖԻԱՅԻ ԹԵՄԷՆ

- 35 . Տ . Պեարոս Քհնյ . Վարդանեան
 36 . Նաղարէթ Կիւմիշկէրտանեան
 37 . Յ . Թօմայեան (Փոխանորդ Ֆրանք Նահիկեանի)

ՇԻՔԱԿՅՈՅԻ ԹԵՄԷՆ

- 38 . Աւետիս Սեւեան (Փոխանորդ Տ . Վահրամ Վ .ի)
 39 . Գէորդ Պ . Թովմաճանեան (Փոխանորդ Տոքթ .
 Շէքէրճեանի)
 40 . Եղիա Քըյմէթեան (Փոխանորդ Յ . Տապանեանի)

ՖՐԷՉՆՅՈՅԻ ԹԵՄԷՆ

- 41 . Տոքթ . Կ . Յ . Գալուստեան (Փոխանորդ Վարդան
 Ծ . Վրդ . Գասպարեանի)
 42 . Վահան Քիւրքճեան
 43 . Մաղաք Գ . Պէրպէրեան

ՖԱՌԻԼԸՐԻ ԹԵՄԷՆ

- 44 . Տ . Շահէ Ծ . Վ . Գասպարեան (Փոխանորդ Տ .
 Թէոդորոս Քհնյ . Իսահակեանի)
 45 . Գէորդ Սրապեան

ՍԻՐԱՔԻԻՍԻ ԹԵՄԷՆ

- 46 . Տոքթ . Փ . Աղամեան
 47 . Ստեփան Նիքսարլեան (Փոխանորդ Յ . Աղաա-
 եանի)

ՔԷՆԷԹԻՔԷԹԻ ԹԵՄԷՆ

48. Տ. Տրխիոն Ծ. Վրդ. Պիծակեան
 49. Սարգիս Տէմիրճեան
 50. Գարեգին Գէորգեան

ՏԻԹՐՈՅԹԻ ԹԵՄԷՆ

51. Գէորգ Ճախալեան (Փոխանորդ Տ. Սահակ Վրդ. Նազարէթեանի)

ՔԼԻՎԼԷՆՏԷ ԹԵՄԷՆ

52. Կարապետ Փափաղեան

ՐԻՉՄԸՆՏԻ ԹԵՄԷՆ

53. Յարութիւն Գասապեան

ՄԵՍԻՆԱՅԻ ԹԵՄԷՆ

54. Եղիազար Աղամեան

ՊԻՆԿԷՄԹԸՆԻ ԹԵՄԷՆ

55. Մանուկ Էլմասեան

ՍՓՐԻՆԿՅԻԼՏԻ ԹԵՄԷՆ

56. Ներսէս Փիլիկեան

Երեսօթխաններու օրինաւորութիւնը ճշտուելէ ետք (բացառութեամբ Տիարք Յովհ. Եաղճեանի, Հայկ Սըմսարեանի եւ Վարդան Մամիկոնեանի) Ժողովը միաձայնութեամբ իրաւունք տուաւ Դիւանին կազմել ընտրելեաց եռապատիկ ցանկ մը Երեսօթխանական Ժողովոյ Դիւանին ընտրութեան համար :

Դիւանը Ժողովին ներկայացուց հետեւեալ եռապատիկ ցանկը Ատենապետի ընտրութեան համար .

Մարկոս Տէր Մանուէլեան

Տոքթ. Փ. Աղամեան

Աւետիս Սէլեան

Իսկ Ատենադպիրի ընտրութեան համար հետեւեալ եռապատիկ ցանկը .

Մաղաք Գ. Պէրպէրեան

Թորոս Վարդանեան

Շմաւոն Մինասեան

Ժողովը դադանի քուէով Ա. Ատենապետ ընտրեց Մարկոս Տ. Մանուէլեան, իսկ Բ. Ատենապետ՝ Տոքթ. Փ. Աղամեան :

Ատենադպիրի ընտրութիւնը կատարուեցաւ ձեռամբարձ քուէով, եւ Ա. Ատենադպիր ընտրուեցաւ Մաղաք Գ. Պէրպէրեան, իսկ Բ. Ատենադպիր՝ Թորոս Վարդանեան :

Նորընտիր Գիւանը անցաւ իր պաշտօնին գլխուխը : Երեսփոխաններ լսեցին Տիարք Հայկ Սըմսարեանի, Վարդան Մամիկոնեանի եւ Յովհ. Եաղճեանի ընտրութեանց օրինաւորութեան դէմ յարուցուած խնդիրը եւ թերուդէմ վիճելէ յետոյ, մեծամասնութեամբ որոշուեցաւ անհետեւանք թողուլ յարուցուած խնդիրները՝ փաստերու անբաւականութեանց պատճառաւ, եւ վերոյիշեալ Երեսփոխաններն արտօնուեցան մասնակցիլ ժողովին՝ իբրեւ օրինաւոր երեսփոխաններ :

Ժողովը յետոյ անցաւ իր օրակարգի խնդրոյն, որ էր՝ «Համերաշխութեան խնդիրը» :

Երեսփոխանական ժողովէն ընտրուած Լիազօր

Յանձնախումբին Ատենապետ՝ Մ . Գ . Պէրպէրեան
կարգաց Յանձնախումբին դործունէութեան ընդ-
հանուր տեղեկագիրը , եւ անոր յարակից պաշտօնա-
կան գրութիւնները , որք ստացուած էին Հ . Յ . Դաշ-
նակցութեան Կեդր . Կօմիտէէն եւ Ազգ . Պաշտ . Միու-
թենէն : Յանձնախումբին տեղեկագրութենէն ինչ-
պէս նաեւ փոխանակուած թղթակցութիւններէն
յայտնուեցաւ , որ համերաշխութիւնը դոյացնելու
համար միայն մէկ առարկելի կէտ կը մնար Հ . Յ .
Դաշնակցութեան եւ Ազգ . Պաշտ . Միութեան միջեւ ,
որն էր փոխադարձ համաձայնութեան սկզբունքը
կիրարկել համերաշխական մարմինը կազմող ներ-
կայացուցիչներու ընտրութեան համար : Վիճարա-
նութիւններն սկսան այս խնդրոյ վրայ : Բայց պէտք
է դիտել տալ , որ Լիազօր Յանձնախումբին կողմէ
դրուած էր թէ՛ Հ . Յ . Դաշնակցութեան Կեդր . Կօ-
միտէին եւ թէ՛ Ազգ . Պաշտ . Միութեան , որպէս զի
երկ-երկու Լիազօրներ նշանակէին Երեսփ . Ժողովին
հրաւէրով , անհրաժեշտութեան պարագային ներկայ
դանուելու Ժողովին , համերաշխութեան խնդրոյն
շուրջ բերանացի լուսարանութիւններ տալու հա-
մար : Լիազօր Յանձնախումբի հրաւէրին ի պատաս-
խան՝ Հ . Յ . Դաշնակցութեան Ամերիկայի Կեդր . Կօ-
միտէն ընտրած էր իր երկու Լիազօր ներկայացու-
ցիչներ , Տոքթ . Ն . Տ . Ս . Թաշճեան եւ Ահարոն Սա-
չաքլեան , որոնք ներկայ դանուելով Ժողովին՝ տուին
հարկ եղած լուսարանութիւններն ու բացատրու-
թիւնները , իբր լրացուցիչ մաս Հ . Յ . Դաշնակցու-
թեան կողմէն Լիազօր Յանձնախումբին ուղարկուած

Թղթակցութիւններուն համերաշխութեան խնդրին նկատմամբ :

Վիճարանութիւնները շարունակուեցան եւ տակաւին եզրակացութեան մը չյանգած՝ նիստը փակուեցաւ ժամը 7.30ին, մէկ ժամ յետոյ վերսկսելու որոշումով :

ՆԻՍՏ Բ .

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒ ՀՐԱԺԱՐԵՑՈՒՑՈՒՄՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Երեսփոխանական Ժողովին Երկրորդ Նիստը բացուեցաւ իրիկուան ժամը 8.30ին, նախագահութեամբ Առաջնորդ Հօր եւ ներկայութեամբ 50 Երեսփոխաններու :

Վիճարանութիւններ վերսկսան Օրակարգի խնդրին շուրջ, որ տեւեց մօտաւորապէս մէկուկէս ժամ եւ վերջապէս ձայներու մեծամասնութեամբ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը .

«Երեսփոխանական Ժողովը լսելով Յանձնախումբի տուած տեղեկութիւնները եւ այդ առթիւ արտայայտուած դանազան կարծիքները, կը յանգի այն եզրակացութեան, որ համերաշխութեան իրականացման համար անհրաժեշտ է ընդունիլ ներկայացուցիչներուն փոխադարձ համաձայնութեան ըսկըզբունքը, եւ կը պարտադրէ ազգային բոլոր դործօն մարմինները համաձայնիլ այս սկզբունքին շուրջ եւ իրականացնել ազգային բաղձացուած համերաշխութիւնը : Անհամաձայնութեան պարագային՝ Ազգ. Երեսփոխանական Ժողովը պիտի ճշտէ իր բունելիք դերքը, եւ այս համաձայնութեան դործին

վարուամբը կը յանձնուի նախորդ Երեսփոխանական
Ժողովէն ընտրուած եւ արդէն դոյութիւն ունեցող
Լիազօր Յանձնախումբին» :

Համերաշխութեան խնդիրը լուծուելէ յետոյ,
քանի մը երեսփոխաններ (մասնաւորապէս Պոսթոնի
երեսփոխան Տ. Միհրան Սվազլեան) առաջարկ բերին
գրադիլ Առաջնորդին պաշտօնավարութեան ու անձին
դէմ եղած գրաւոր ու բերանացի բողոքներով : Այս
մասին թերուդէմ վիճարանութիւններ եղան, կար-
դացուեցաւ Սահմանադրութեան յայտնի յօդուած-
ները եւ մեկնութիւններ տրուեցան ատոնց իմաստին
վրայ եւ վերջապէս Ժողովին նախադասը՝ Տ. Արսէն
Վրդ. խօսք ատենելով, յայտարարեց .

—«Թէեւ Ժողովը Կեդր. Վարչութեան պատրաս-
տած օրակարգէն դուրս ուրիշ խնդիրներով գրադե-
լու իրաւունք չունի եւ Սահմանադրութեան 13րդ
յօդուածին համաձայն՝ Առաջնորդի անձին ու պաշ-
տօնավարութեան դէմ եղած դանդատները պէտք էր
որ նախապէս Կեդր. Վարչութեան դիմուէին, այ-
սուամենայնիւ ես պիտի լսեմ իմ դէմ եղած բոլոր
բողոքները եւ ինքզինքս պիտի պաշտպանեմ, պայ-
մանաւ որ Ժողովը դոնրաց շարունակուի, որպէս զի
Ժողովուրդը իմանայ թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ» :
Կեդր. Վարչութեան Ատենապետ Մ. Գ. Պէրպէրեան
յայտարարեց, թէ Երեսփոխանական Ժողովին օրա-
կարգը պատրաստուած է Վարչութեան Դիւանին
կողմէ, ատանց Վարչութեան գիտութեան եւ որո-
շումին, հակառակ Սահմանադրութեան 42րդ յօդ-
ուածին տրամադրութեան . հետեւաբար Երեսփոխա-

Յարմար թեմ
✓ պարագրաֆ

նական ժողովը իրաւասու է ժողովին օրակարգը աւելցնել կամ պակսեցնել—եթէ ինք կարեւոր կը համարի: Այս հասկըցողութեամբ ժողովը համաձայնեցաւ Նախագահին առաջարկած պայմանին եւ որոշեց նիստը դոնրայ շարունակել: Երեսփոխանի մը կողմէն բերուեցաւ սա՛ առաջարկը.

—«Առաջնորդին պաշտօնավարութեան եւ անձին դէմ եղած դրաւոր եւ բերանացի բողոքներուն նկատառութիւնը իբրեւ օրակարգի խնդիր քուէարկել եւ հարցապնդում ուղղել Առաջնորդին»:

Սոյն առաջարկի վրայ թերուդէմ վիճարանութիւններէ ետքը՝ 21ի դէմ 23 քուէով (ոմանք ձեռնպահ) ընդունուեցաւ այդ առաջարկը, եւ այսպէս Առաջնորդի պաշտօնավարութեան խնդիրը օրինաւորապէս անցաւ օրակարգ: Վերոյիշեալ առաջարկը քուէարկուելէ եւ օրակարգ անցնելէ ետք՝ Նախագահ Տ. Արսէն Վրդ. ինքնարեւարար սրահը թողուց ու հեռացաւ, առանց բառ մը իսկ արտասանելու եւ հակառակ քիչ առաջ ժողովին իր ըրած յայտարարութեան: Այս պարագային մեկնեցան նաեւ կարգ մը ուրիշ երեսփոխաններ եւս, ժամանակը ուշ ըլլալու պատճառարանութեամբ. սակայն Երեսփոխաններու բացարձակ մեծամասնութիւնը մնաց եւ ժողովն շարունակուեցաւ կատարեալ օրինապահութեամբ:

Օրակարգ անցած խնդիրները— այսինքն՝ Առաջնորդին դէմ եղած բողոքները նկատի առնուեցան եւ թերուդէմ երկար վիճարանութիւններ եղան: Երեսփոխաններու մեծագոյն մասը այն կարծիքէն էր, որ Տ. Արսէն Վրդ. ի պաշտօնավարութիւնը բո-

լորովին անգոհացուցիչ էր եւ նոյն իսկ սկսած էր ազգային ու եկեղեցական շահերուն վնասակար դառնալ ամիսներէ ի վեր, հետեւաբար պէտք էր հրաժարցնել դայն: Այս կարծիքին հակառակ արտայայտուեցան քանի մը Երեսփոխաններ, պնդելով, թէ «ժամանակը անյարմար է Առաջնորդի փոփոխութիւն ընելու եւ թէ Արսէն Վրդ.ին վեց ամիս եւս պաշտօնավարելու պատեհութիւն տալու է»:

Ժողովը լսելէ ետքը բոլոր վիճարանութիւնները՝ ուղեց վճիռ մը տալէ առաջ հրաւիրել Առաջնորդը, որպէս զի իր դէմ եղած ամբաստանութիւնները լսէ եւ պատասխանէ, ինչպէս որ ինքն յայտարարած էր ժողովին առջեւ: Այս նպատակաւ պաշտօն տրուեցաւ Սփրինկֆիլտի Երեսփոխան Ներսէս Փիլիկեանին, որ Առաջնորդարան երթայ եւ ժողովի հրաւիրէ Առաջնորդը:

Գեր. Տ. Արսէն Ծ. Վրդ. Վեհունի հրաւիրակ Երեսփոխանին տուած է հետեւեալ շա'տ յատկանշական պատասխանը.

—«Ես ժողովը լուծած եմ. ժողովը չի կրնար շարունակուիլ ու ես չեմ ի դար»:

Արսէն Վ. ի այս պատասխանին վրայ Երեսփ. Ժողովը շարունակեց իր դործը և համաձայն Սահմանադրութեան 30րդ յօդուածին տրամադրութեան, ներկաներու բացարձակ մեծամասնութեամբ (2-ի դէմ 27) քուէարկեց հետեւեալ բանաձեւը.

«Երեսփոխանական Ժողովը իր 1917 Փետր. 18ի նիստին մէջ լսելէ վերջ Առաջնորդ Գեր. Արսէն Ծ.

Վրդ. Վեհուենիի դէմ յայտնուած գրաւոր եւ բերա-
նացի գանդատները, եւ

Նկատելով, որ Արսէն Ծ. Վրդ. Վեհուենի իր պաշ-
տօնավարութեան միջոցին Սահմանադրական սկզբ-
բունքներու եւ տրամադրութեանց հակառակ ինքնա-
դրլուխ եւ կամայական տնօրինութիւններ ըրած է,
հաշիւ եւ տեղեկագիր ներկայացնելէ խուսափած է,
նոյն իսկ անտես ըրած է Երեսփոխանական Ժողովին
կողմէ տրուած որոշումները եւ յանձնարարութիւն-
ները.

Նկատելով, որ իր պաշտօնական յարաբերու-
թիւններուն մէջ քէքէ գուրկ գտնուած է,

Նկատելով, որ եկեղեցական պաշտօնէութեան
մէջ տեսնուած անկարգութիւններու եւ դայթակղա-
կան արարքներու նկատմամբ անտարբեր մնացած է,

Նկատելով, որ Ամերիկայի Կրօնական, եւ աղ-
գային պաշտօնական շրջանակներու մէջ իրեն նկատ-
մամբ յարգանք եւ համակրանք կը պակսի, ինչ որ
անկարելի կ'ընէ իր գործակցութիւնը վարչական
մարմիններու հետ,

Կ'որոշէ,

Ա.— Ամերիկահայ Սահմանադրութեան 30րդ
Յօդուածին մէջ տրուած իրաւասութեան համաձայն
Առաջնորդական պաշտօնէ հրաժարցնել Գեր. Տ. Ար-
սէն Ծ. Վրդ. Վեհուենին, եւ այս որոշումը իրեն հա-
ղորդել Դիւանին միջոցաւ:

Բ.— Այս որոշումը հաղորդել Կեդր. Վարչու-
թեան, յանձնարարելով, որ ըստ Սահմանադրու-
թեան, Տեղապահ մը ընտրէ. իսկ եթէ Կեդր. Վար-

չութիւնը թուականէս մինչեւ երկու շաբաթ նիստ
ընելով չգործադրէ այս որոշումը, այն ատեն Երես-
փոխանական Ժողովոյ Գիւմարին կողմէ հրաւեր ուղ-
ղուի Ֆրէզնոյի Հողեւոր Հովիւ Գեր. Տ. Վարդան Ծ.
Վրդ. Գասպարեանին և կոչուի Տեղապահուածքէն: Եւ
եթէ Վարդան Ծ. Վրդ. այդ պաշտօնը վերջնակա-
նապէս մերժէ, այն ատեն միեւնոյն հրաւերը ուղղել
Գեր. Բարդէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանին:

Գ. — Այս իրողութիւնները անմիջապէս հաղոր-
ղել Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին»:

Քուէարկուած սոյն բանաձեւին հակառակ քուէ-
տուին Տոքթ. Փ. Աղամեան և Մինաս Զամանիկեան,
իսկ ի նպաստ՝ հետեւեալ Երեսփոխանները.

- | | |
|----------------------------|----------------------|
| 1. Աւետիս Տէրոյենց | Երեսփոխան Բրավիտէնսի |
| 2. Աւետիս Սէլեան | » Երեւանի |
| 3. Առաքել Գ. Եղրճեան | » Ուսարի |
| 4. Կարապետ Փափաղեան | » Բլիվլէնսի |
| 5. Դաւիթ Աուկասեան | » Պոսթոնի |
| 6. Պապա Ասլընեան | » Բրավիտէնսի |
| 7. Գէորդ Սրապեան | » Փառլըրի |
| 8. Պողոս Ճորճորեան | » Ուսարի |
| 9. Զաքար Դանիէլեան | » Բրավիտէնսի |
| 10. Հայկ Սըմսարեան | » Ուէսթ Հոպօքըն |
| 11. Եղիշէ Քհնյ. Գալչընճեան | » Լօվէլ-Լօրէնսի |
| 12. Շահէ Վրդ. Գասպարեան | » Փառլըրի |
| 13. Սերոբ Տէրտէրեան | » Լօվէլ-Լօրէնսի |
| 14. Գէորդ Պ. Թովմաճանեան | » Երեւանի |
| 15. Մ. Գ. Պէրպէրեան | » Ֆրէզնոյի |
| 16. Ն. Ս. Կիւմարեանեան | » Ֆիլատէլֆիաի |

- | | | |
|----------------------------|---|---------------|
| 17. Յովհաննէս Թէմոյեան | » | » |
| 18. Ուլսիա Երամեան | » | Պոսթոնի |
| 19. Կարապետ Մ. Չանդալեան | » | Ուէստ Հօպօքնի |
| 20. Մ. Տէր Մանուէլեան | » | Լօվէլ-Լօրէնսի |
| 21. Սարգիս Տէմիրճեան | » | Նիւ Պրիթընի |
| 22. Շմաւոն Մինասեան | » | Լօվէլ-Լօրէնսի |
| 23. Միհրան Սվաղլեան | » | Պոսթոնի |
| 24. Ներսէս Փիլիկեան | » | Սփրինկֆիլտի |
| 25. Վահան Մ. Քիւրքճեան | » | Յրէզնօյի |
| 26. Տոքթ. Կ. Յ. Գալուստեան | » | Պոսթոնի |
| 27. Վարդան Մամիկոնեան | » | Բրավիտէնսի |

Ժողովը յանձնարարեց դիւանին ընդարձակ տեղեկագիր մը դրկել Սմենայն Հայոց Վեհ. Հայրապետին, Առաջնորդին հրաժարեցուցման պատճառները թուող եւ մանրամասնօրէն բացատրող տեղեկագիր մը :

Նոյնպէս յանձնարարուեցաւ Դիւանին, Տ. Արսէն Ծ. Վրդ. Վեհուհիի հրաժարեցուցման հետ յարարերութիւն ունեցող խնդիրները տնօրինել ըստ իր հայեցողութեան եւ համաձայն ժողովին կողմէ քուէարկուած բանաձեւին :

Երեսփոխանական Ժողովը իր նիստը վերջացուց կէս դիշերէն ետք ժամը 2.30ին, Դիւանին վերոյիշեալ յանձնարարութիւններն ընելէ ետքը :

Ի Դիմաց Ամերիկահայ Ազգ. Երեսփ. Ժողովի

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԱՐԿՈՍ Տ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

18915




ԱՄՓՈՓՈՒՄՆ ԵՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Այն ընդարձակ Տեղեկագրին, որ դրկուեցաւ ան վեհ. Հայրապետն Ամենայն Հայոց, 1917 Մարտ 10 թուականաւ, Երեսփոխանական Ժողովոյ Դիւանին կողմէն:

Տեղեկագիրը նախ կը նկարագրէ 1917 Փետր. 18ի Երեսփոխանական Ժողովին դումարումը՝ ներկայութեամբ յիսուն հինգ Երեսփոխաններու եւ Նախագահութեամբ Առաջնորդին (Տ. Արսէն Մ. Վ. Վեհունի):

Համերաշխութեան խնդրին վիճարանութեան միջոցին, Երեսփոխաններէն ոմանք խստիւ քննադատած են Առաջնորդը, որ չարաչար խեղաթիւրած է Համերաշխութեանց բանակցութեանց հիմք կազմող նախորդ բանաձեւը, որ չէ՛ յարդած 1916 Հոկտ. 27—31 դումարուած Երեսփոխանական Ժողովոյ որոշումները, որ կորսնցուցած է իր չէղութիւնը եւ իր միակողմանի ընթացքով՝ վտանգած է Համերաշխութեան յուսալից ձեռնարկը:

Գեր. Տ. Արսէն Վրդ. ոտքի ելնելով յայտարարած է, որ պիտի պատասխանէ այդ ամբաստանութեանց, պիտի պաշտպանէ ինքզինք եւ պիտի հրաժարի, բայց անկարող եղած է իր պատասխաններուն եւ ինքնապաշտպանութեան մէջ, որուն վրայ խումբ մը Երեսփոխաններ աղմկեր են ժողովասրահը, պնդելով, որ ժողովը իրաւունք չունի արտաքոյ Օրակարգի խնդրով զբաղելու:



4248
6549-64 4229

Ս.Ռաջնորդը, քաջալերուելով այս աղմուկներէն, յայտարարեր է, որ իր անձին կամ իր պաշտօնավարութեան դէմ եղած դանդաւաններ անպայման պէտք է անցնին Կեդրոնական Վարչութեան բովէն: Երեսփոխանք՝ Սահմանադրութեան 42րդ եւ 30րդ յօդուածները մատնանիշ բրած են, թէ օրինաւոր է Ժողովին ընթացքը, եւ ասոր վրայ Ս.Ռաջնորդը դարձեալ յայտարարեր է պատասխանել հարցապնդումներու, պայմանաւ որ Ժողովը քուէով յայտնէ իր կամքը:

Ժողովը իր այս պայմանն ալ ընդուներ եւ որոշեր է.

Ա.— Նկատելով, որ 1916 Հոկտ. 29—31ի Երեսփոխանական Ժողովն ալ, թէեւ հակառակ Սահմանադրութեան 27րդ յօդուածին եւ Արսէն Վրդ.ի քրմահաճ կարգադրութեամբ միակ Օրակարգով հրաւիրուած էր ի նիստ, բայց Ժողովը ուրբը նոր խնդիրներ ալ աւելցուցած է այդ Օրակարգին վրայ.

Բ.— Նկատելով, որ 1916 Հոկտ. 29—31ի Երեսփոխանական Ժողովն որոշած է, որ երեք ամիս ետքը դումարուելիք Երեսփոխանական Ժողովը՝ շարունակութիւնն ըլլայ նախորդին.

Գ.— Նկատելով, որ Օրակարգի նոր խնդիրը ըստուածները՝ նոյն ինքն վերջին Հոկտ.ի Երեսփոխանական Ժողովէն քուէարկուած եւ սակայն Ս.Ռաջնորդի կողմէն չյարգուած եւայլն խնդիրներ են.

Դ.— Նկատելով, որ նոյն ինքն Արսէն Վրդ. քանիցս յայտարարած է թէ պիտի պատասխանէ իրեն դէմ եղած ամբաստանութեանց եւ հարցապնդմանց.

1917 թ. Երեսփոխանական Ժողովի 95.

Սահմանադրութեան 27

Ժողովը՝ ձեռամբարձ քուէով—21ի դէմ 23 քուէով —որոչաժ է Օրակարգ անցնել «Առաջնորդի անձին եւ պաշտօնավարութեան դէմ Երեսփոխաններէ եկած դրաւոր եւ բերանացի դանդառները եւ բողոքները, եւ հարցապնդում ուղղել իրեն» :

Ասոր վրայ Առաջնորդը, առանց բառ մը ըսելու, ինչպէս նաեւ կարգ մը Երեսփոխաններ, կը թողուն Ժողովասրահը եւ կը մեկնին :

Դիւանը կը ճշտէ մնացող Երեսփոխաններուն թիւը եւ տեսնելով որ օրինաւոր մեծամասնութիւնը ներկայ է, Ժողովը կ'որոշէ շարունակել իր դործը :

Բ․րդ Ատենապետի առաջարկութեամբ Ժողովի կողմէն պաշտօն կը տրուի Սրբինկֆիլտի Երեսփոխանին, որպէս զի երթայ Առաջնորդարան եւ Ժողովի հրաւիրէ Առաջնորդը, որ սա կերպով կը պատասխանէ այդ հրաւէրին .

—«Ես Ժողովը լուծած եմ . Ժողովը չի կրնար շարունակուիլ ու ես չեմ ի գար» :

Ժողովը դարձանքով կը լսէ Առաջնորդին այս հակասահմանադրական պատասխանը, կ'արձանագրէ զայն եւ կը շարունակէ իր նիստը, եւ քննելով անոր դործերը կը գտնէ դանոնք հակասահմանադրական, եւ հետեւաբար կ'ամբաստանէ զԱրսէն Մ․ Վրդ․ Վեհունին, եւ ամբաստանեալին կուտայ օրինաւոր միջոց եւ ժամանակ, որպէս զի պաշտպանէ ինչդինքն, բայց նա կը մերժէ, եւ 2ի դէմ 27 քուէով կուտայ օրինական վճիռը :

Իսկ Արսէն Վրդ․ին դէմ եղած ամբաստանութիւններն են .

ԱՌԱՋԻՆ

1914 Նոյմ . 26—27ին Երեսփոխանական Ժողովը, նոյն ինքն Կեդրոնական Վարչութեան եւ Առաջնորդ Արսէն Վրդ . ին դիմում ին վրայ, որոչաժ է Սահմանադրութեան վերաքննութիւնը եւ միանգամայն ընտրաժ է «Երեք հոգիէ բաղկացեալ Յանձնախումբ մը, որ Կեդրոնական Վարչութեան հետ վերջնական ձեւի մը վերածելով զայն, զրկէ Վեհ . Հայրապետին ի վաւերացումն, եւ այնուհետեւ ձեռնարկէ զայն հաստատել տալու Ամերիկեան Կառավարութեան» (Տե՛ս տպագրեալ Ատենագրութիւն Ամերիկահայ Երեսփոխանական Ժողովոյ 1914 տարւոյ, էջ 30—31) :

Այդ որոշման վրայէն կ'անցնի երկուքուկէս տարի եւ Արսէն Վրդ . չգործադրեր զայն :

1916 Հոկտ . 29—31ի Երեսփոխանական Ժողովը ցաւօք կ'արձանագրէ, թէ Արսէն Վրդ . չէ գործադրած իր երկուքուկէս տարի յառաջ տուած որոշումը, եւ երկրորդ անգամ պարզ եւ կտրուկ կերպով կը յանձնարարէ իրեն, որ իբրեւ Նախագահ, կատարէ իր պաշտօնը, գործադրելով տրուած որոշումը, եւ վերջ տայ «վարչական հրահանգ» անունով Առաջնորդարանէն պարբերաբար հանուած նորանոր օրէնքներու, եւ այլեւս չհամարձակի Երեսփոխաններ ընտրելու համար նոր օրէնքներ գծել իր Վարչութեան հետ :

1917 Փետր . 18ի Երեսփոխանական Ժողովը դարձեալ դառնութեամբ կը տեղեկանայ, որ Արսէն Վրդ .

նոյն իսկ հրաւէր չէ ուղղած Սահմ. Վերաքննիչ Յանձնախումբի անդամոց, եւ դիտումնաւոր կերպով անարդած է Երեսփ. Ժողովին կրկնակի յանձնարարութիւնները եւ ընդդէմ գործած է Սահմանադրութեան 11րդ Յօդուածին Գրդ եւ Էրդ հաստատուներուն :

ԵՐԿՐՈՐԴ

Արսէն Վրդ., հակառակ Սահմանադրութեան 43րդ յօդուածին, «ինքն եղած է թէ՛ դրամները գանձողը եւ թէ՛ ծախսողը», ինչպէս ցոյց կուտայ 1914 տարուան Երեսփոխանական Ժողովոյ Ատենագրութիւնը (էջ 30), եւ այս ապօրինութիւնը խորին ցաւով շեշտուած է 1916 Հեկտ. 29—31ի Երեսփոխանական Ժողովոյ մէջ ալ, եւ հաստատուած է, որ Արսէն Վրդ. 300 տուարի գումար մը անձամբ գանձեր է, եւ կարեւորութիւն չէ տուած օրինական Գանձապատի բողոքներուն : Այսու հանդերձ Ժողովը անգամ մըն ալ յիշեցուցած է Արսէն Վրդ.ին Սահմանադրութեան 43րդ յօդուածը, եւ յանձնարարած է, մինչեւ 1917 Յունվար 7, տպագրել տալ Առաջնորդարանին երեք տարուան ելեւմտից հաշուեցոյցը եւ զրկել թեմերը :

1917 Փետր. 18ի Երեսփոխանական Ժողովը կը հաստատէ, թէ Արսէն Վրդ. այս հաշուական խնդրին մէջ ալ չէ յարդած Սահմանադրութեան 43րդ յօդուածը եւ չէ՛ գործադրած Ժողովին որոշումը հաշիւներու հրատարակութեան մասին, բռնարարած է Տնտեսական Ժողովին օրինական իրաւունքը, եւ խոյս տուած է հաշուետուութենէ :

ԵՐՐՈՐԴ

Կրօնական ժողովն ալ մատնած է անդործութեան եւ անպատուած է Առաջնորդարանը: Նախ բռնադրօսիկ պատճառներով հրաժարցուցեր է զՄուշեղ Արքեպս. Սերոբեան՝ Վարչութեան եւ Կրօն. ժողովոյ Ատենապետութենէ: Անոր տեղ նշանակեր է անպաշտօն եկեղեցական մը, Տ. Տրխիտն Վրդ. Պիծակեան, որ չէր կրնար նոյն իսկ պարզ անդամ ըլլալ Կրօն. ժողովոյ՝ ըստ Յօդուածին Սահմանադրութեան:

Իսկ Կրօն. ժողովոյ Ատենապետութեան կոչած է Տիրայր Վրդ. Մարգարեանը, որ ստիպուած էր հեռանալ Ուէսթ Հոպօքընի հովուութենէն, Քէյրի անուն օտարազգի եւ անպատիւ կնոջ մը պատճառաւ:

Երեսօթիսանաց վրդովմունքն ու զայրոյթը շատ մեծ եղաւ՝ երբ իրենց իսկ աչքերով տեսան մէկէ աւելի նամակներ, Տիրայր Վրդ. Մարգարեանի ամէնէն ծանօթ ձեռագրով եւ ստորագրութեամբ, գրուած հայերէն եւ անգլիերէն, որոնցմով այդ կիներ եւ հեռն ալ ուրիշ կին մը, կը հրաւիրուին Առաջնորդարան Տասը հատ նամակներ այս թղթակցութենէն ձեռք բերուած են, ամէնքն ալ Տիրայր Վրդ.ի ձեռագիր, եւ ատոնց մէկուն մէջ գրուած է—«ԱՄԷՆ ԲԱՆ ՊԱՏՄԱԾ ԵՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՍ ԵՒ ԻՄԱՅՈՒՅԱԾ ԱՆՈՐ, ՈՐ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ Է...»: Նամակները գրուած են 1917 Յունվարէն Փետրուար ամիսներու ընթացքին: ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՂԱԾ Է, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԷԼԷՖՅՈՆԻՆ ԹԻՒԸ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է, ՈՐՊԷՍ ՉԻ

ՀԻՒՐԵՐԸ ԱՊԱՀՈՎ ՀԱՄՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱ-
ՆԻՆ ՎԵՐՆԱՅԱՐԿԸ, որոնք սակայն Ուսար հասնելէ
յառաջ, Պոստոնի մօտ, Ռաքըսպրի, տան մը մէջ կը
ձերբակալուին՝ դադտնի ստիկաններուն կողմէն,
եւ Նիւ Եորքի թերթերը կը տեղեկագրեն այս դայ-
թակղութիւնը:

1917 Փետր. 18ին, Երեսփոխանական Ժողովին
մէջ, Երեսփոխաններէն ոմանք տեղեակ էին արդէն
այս դայթակղութեան, այնպէս որ Տիրայր Վրդ.,
թէեւ Երեսփոխան, չհամարձակեցաւ դալ Ժողովին:
Իսկ Արսէն Վրդ. կարծեց իր ստախօսութեամբը բա-
ցատրել Կրօն. Ժողովոյ Ատենապետ եւ Առաջնորդա-
րանի Դիւանապետ Տիրայր Վրդ. Մարդարեանին
բացակայութիւնը, յայտարարելով, թէ «գացած է
մկրտութիւն ընելու»:

ԶՈՐՐՈՐԴ

1914 Նոյմբ. 26—27, Երեսփոխանական Ժողովը
որոշեց դորձակցիլ Ազգային Պաշտպանութեան Մի-
ութեան եւ ասոր վերաբերեալ բանակցութիւնները
եւ կարգադրութիւններն ընելու համար՝ ընտրեց
Լիազօր Յանձնախումբ մը:

Ա. Պ. Միութեան Նախագահ եղաւ Ամերիկայի
Հայոց Առաջնորդը: Արսէն Վրդ. իբրեւ Նախագահ,
երկուքուկէս տարի մնալէ ետքը այս Միութեան մէջ,
1916 Յունիսէն ի վեր «երեւակայելի ամէն խոչնդոտ
հանեց գոյացած համերաշխութիւնն ալ քանդելու,
եւ տգեղ ու անտեղի եւ չափազանց կոշտ յարձակում-

ներով կուսակցական կիրքեր դրդուեց եւ յարանուանական դիւրազգածութիւններ վիրաւորեց» :

«Հայրապետական Դիւանին՝ Համար 1170 եւ Յուն. 1, 1916 թուակիր ընդարձակ եւ պատուական գրութիւնը՝ Արսէն Վրդ. Նիւ Եորքի մէջ իր գումարել ջանացած ողբալի Ժողովին մէջ՝ խիստ անարժան ու անխոստովանելի դիտումներուն ծառայեցուց», եւ ատոր այնպիսի այլանդակ մեկնութիւններ տուաւ, որուն հետեւանքով Բողոքականք ոչ միայն Առաջնորդը ստիպեցին հրապարակաւ բացատրութիւններ տալու՝ զորս տուաւ ուրացումներով, այլ նաեւ շարաթներով Հայ մամուլը իրարու դէմ դրդուեց, եւ յետոյ ապա, 1916 Հոկտ.ին, Երեսփոխանական Ժողովը ամիսերան թողուց՝ իր յամառ, անխոհեմ, ինքնահաւան մարդու յերկրած յայտարարութիւններով :

Արսէն Վրդ. խնդիրը կնճռոտելէ դատ, Վեհ. Հայրապետին անունն ալ խառնեց իր անտեղի պայքարին մէջ եւ Ն. Ս. Օծութեան հրահանգները այլանդակեց եւ սխալ մեկնեց :

Ազգային Պաշտպանութեան Միութեան անդամակցող Հայ Առաք. Եկեղեցւոյ երկու բարձրագոյն պաշտօնէից, Մուշեղ եւ Բարդէն Սրբազաններուն մասին շարախօսելէ դատ, Հայ Եկեղեցւոյ շահուց եւ պատուին պաշտպանութեան նկատմամբ անոնց թէ՛ կարողութիւնը եւ թէ՛ յօժարութիւնը կասկածի ենթարկելու նպատակով՝ յանդգնեցաւ զրպարտիչ նամակներ դրել Ն. Վեհափառութեան :

Ազգ. Պաշտ. Միութեան դէմ՝ հրապարակային

պայքարի հիմ դրաւ, պահանջելով, որ Միութեան
որոշումները իր վէթօյիմ ենթարկուին: Միութեան
կողմէն մերժուեցաւ այս պահանջը, եւ Արսէն Վրդ․
ասոր վրայ, հրամանագրեց Երեսփոխանական Ժո-
ղովի կողմէն Միութեան գործակցող երկու անդամ-
ներուն, որ այլեւս չենթան Միութեան նիստերուն:

Այսպիսի գործ մը Արսէն Վրդ․ի իրաւասութե-
նէն դուրս էր, քանի որ Երեսփոխանական Ժողովի
կողմէն ընտրուած Լիազօր Յանձնախումբին տրուած
էր այդ իրաւասութիւնը:

Բայց Արսէն Վրդ․ իր լռփնադլուխ կարգադրու-
թեամբ ուղեց աւելի յառաջ երթալ եւ օր մըն ալ յայ-
տարարեց, թէ «Հայ Առաք․ Եկեղեցին բաժնուած է
եւ դուրս եկած Ազգ․ Պաշտ․ Միութենէն»:

Արսէն Վրդ․ի կողմէն Երեսփոխանական Ժողովն
ի նիստ հրաւիրուեցաւ յոկտոբ, 1916 Հոկտ․ 29—31
ին, Օրակարգի միակ խնդրով մը, որ էր Հայրապե-
տական Դիւանին վերոյիշեալ պաշտօնագիրը:

Բայց Երեսփոխանական Ժողովն, լսելէ ետքը
թէ՛ Առաջնորդը եւ թէ՛ Ազգ․ Պաշտ․ Միութեան գոր-
ծակցող իր ներկայացուցիչները, դատապարտեց Ար-
սէն Վրդ․ին ինքնադլուխ տնօրէնութիւնը, չեղեալ
համարեց անոր յայտարարած բաժանումը, շեշտեց
համագործակցութեան պէտքը, որոչեց, որ 1914ին
ընտրուած լիազօրներ շարունակեն իրենց պաշտօնը,
եւ հրահանգ տուաւ նոյն ինքն Արսէն Վրդ․ին, որ
դուտ ազգային և քաղաքական խնդիրներու մէջ խոր-
հրդակցի Ազգ․ Պաշտ․ Միութեան հետ եւ ըստ այնմ

գրէ իր պաշտօնագիրները եւ դադրեցնէ իր ինքնա-
գրչուի կարգադրութիւնները :

Երեսփոխանական Ժողովը, իր 1917 Փետր. 18ի
նիստին մէջ նկատի առաւ այս համերաշխութեան
խնդիրը, եւ տեսաւ թէ Արսէն Վրդ. գործած է ինք-
նագրչուի եւ վնասած է համերաշխութեան գործին,
եւ ինքզինքը պատասխանատու չնկատեր Երեսփոխա-
նական Ժողովին, որ զինքն Առաջնորդ ընտրած է :

ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայ թերթերու մէջ Արսէն Վրդ. ի հրաժարման
մասին լուրեր հրատարակուած էին, Երեսփոխանա-
կան Ժողովոյ Դիւանի անդամներէն մէկը հարցում
մը ուղղած է իրեն եւ խնդրած է որ բացատրութիւն
մը տայ Ժողովին, որովհետեւ Երեսփոխանական
Ժողովն իրաւունք ունի գիտնալու թէ Առաջնորդը
հրաժարած է թէ ոչ : Արսէն Վրդ. խուսափողական
պատասխան կուտայ, ըսելով թէ Ժողովը միակ Օ-
րակարգ ունի եւ իրաւունք չունի դրադելու ուրիշ
խնդիրներով, բայց կը հաստատուի, թէ Արսէն Վրդ.
Օրակարգի կազմութեան խնդրին մէջ ալ բռնարարած
է Սահմանադրութեան 42րդ յօդուածը, որ կեդրո-
նական վարչութեան կուտայ Երեսփոխանական Ժո-
ղովոյ Օրակարգ պատրաստելու իրաւունքը :

ՎԵՑԵՐՈՐԴ

Երեսփոխանական Ժողովն որոշած էր 1916 Հոկտ.
29—31ի նիստին մէջ, թէ Առաջնորդը պարտաւոր է
Երեսփոխանական Ժողովոյ հրաւիրագիրները՝ Ե-

ընտանիքներուն ձեռք հասցնել ժողովոյ համար նշանակուած օրէն առ նուազն 30 օր յառաջ, նկատելով երեսօթիտան նշանակելու եւ դադուլթին խիտ ընդարձակ ըլլալու պայմանները: Որոշուած էր դարձեալ, թէ ժողովին կազմը պիտի պահուի նոյն եւ յաջորդ Երեսօթիտանական ժողովոյ նիստերն ալ պիտի համարուին նախորդին շարունակուլթիւնը:

Այս ժողովին մէջ հաստատուեցաւ, թէ նոյն իսկ մօտաւոր թեմերու ու վայրերու Երեսօթիտանաց հրաւիրագիրները միայն շարաթ մը յառաջ հասած էին անոնց ձեռքը եւ անոնք ստիպուած էին հեռագրով փոխանորդներ նշանակել իրենց տեղ: Արսէն Վրդ. այսպէս ըրած է, որպէս զի իրեն հաճելի չեղող Երեսօթիտաններ չհասնին ժողովին:

ԵՕԹՆԵՐՈՐԴ

Երեսօթիտանական ժողովը դառնուլթեամբ հաստատած է նաեւ Արսէն Վրդ. ին վարուելու տխուր կերպերը (tact) իր խօսուածքին, շարժուածքին եւ պաշտօնական յարարերուլթեանց մէջ: Տեղեկագիրը կը յիշէ ամէնէն թարմ օրինակ մը. թէ ինչպէս այս ժողովի առաուն, Առաջնորդարանի մէջ «ստախօս» կոչած է Ֆիլատէլֆիոյ Երեսօթիտան Տիար Նազարէթ Կիւմիւշկէրտանեանի յանիրաւի, յիշոցներ ալ աւելցուցեր է պոռալով, թէ «Քեզ կը խեղդեմ եւ բերանդ կը պատուեմ»:

Տեղեկագիրը բաւական կը համարի հաւաստել, թէ Արսէն Վրդ. իր հիւանդ ջիղերուն ազդեցուլթեան ներքեւ գործող, դիւրագրգիռ, կասկածոտ, անտա-

նելի անձ մըն է, որ շարունակ կը մեղանչէ ամենատարրական քաղաքավարութեան դէմ :

ՈՒԹԵՐՈՐԴ

Երեսփոխանական Ժողովը հաստատած է նաև, որ Արսէն Վրդ. բացարձակապէս անփոյթ եւ ապիկար է հանդէպ Առաջնորդական ընդարձակ վիճակին հողեւոր եւ բարոյական պահանջներուն : Արսէն Վրդ. իր պաշտօնին հողեւոր կողմը չգիտեր, եւ իր սահմանափակ միտքը եւ իր ամբողջ ժամանակը նուիրած է Առաջնորդական իրաւունքներու, Աթոռահարկերու, եւն. դանձման եւ ՅԱՅՏՆԻ ՈՒ ԳԱՂՏՆԻ ԿԵՐՊԵՐՈՎ ՊԱՌԱՍԿՏԵԼՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, հետեւաբար ո՛չ միայն ամուլ է իր պաշտօնավարութիւնը, ԱՅԼԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ :

ԻՆՆԵՐՈՐԴ

Երեսփոխանական Ժողովը հաստատած է, որ Արսէն Վրդ. ի անձին ու պաշտօնավարութեան հանդէպ ո՛չ միայն ընդհանուր գաղութի կողմէն յարգանքի ու պատշաճաւոր համակրանքի պակասումը օրէ օր շեշտուած է, այլ մա՛նաւանդ վերջին եօթը ամիսներէ հետէ պաշտօնական մարմնոց եւ Երեսփոխանութեան վստահութիւնն ալ վերջնապէս կորսընցուցած է եւ չքացուցած է :

Ժողովը տեսաւ թէ Առաջնորդական բարոյական հեղինակութիւնն և դործադիր պաշտօնէի վրայ դայն

ընտրող Երեսփոխանութեան եւ ժողովուրդին յարգանքն ու վստահութիւնը բաներ են, առանց որոց ծանրապէս պիտի տուժեն Ազգը, Եկեղեցին եւ դադութիս անդորրութիւնը, եւ մա'նաւանդ ներկայ ճգնաժամին Երեսփոխանական Ժողովը չկրնար թոյլ տալ որ անպատասխանատու եւ անհանդուրժելի պաշտօնեայ մը այս երկրին մէջ ամէն օր անարդէ Սահմանադրութիւնը, Երեսփոխանական Ժողովոյ որոշումները եւ պաշտօնավարէ, ինքզինքն կոչելով Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին ներկայացուցիչը, որուն ոչ մէկ կերպով պատիւ պիտի բերէ մա'նաւանդ այսուհետեւ, ըստ Երեսփոխանական Ժողովոյ տեսութեան :

Հետեւաբար, կը յաւելու Տեղեկագիրը Երեսփ. Ժողովը իր 1917 Փետր. 18ի, Կիրակի, նիստին մէջ՝ նկատի ունենալով այս բոլոր ծանրակշիռ իրողութիւնները եւ խորապէս ցաւելով, ՈՐ ԻՐ ԲՈԼՈՐ ՓՈՐՁՈՒԱԾ ԵՒ ԿԱՐԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՅԼԵՒՍ ՍՊԱՌԱԾ ԵՆ յարգել տալու համար Սահմանադրական օրէնքները իր Առաջնորդ Նախագահին եւ անկարելի եղած է ա'լ օգտուիլ անոր պաշտօնավարութենէն, պատասխանատու չմնալու համար, վերոյիշեալ ինը գլուխներու մէջ պարզուած բացարձակ իրողութեանց համաձայն, ՕՐԻՆՕՔ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ԳՏԱԻ ՁԳԵՐ . ԱՐՍԷՆ ՎՐԴ . ՎԵՀՈՒՆԻ, եւ որոշեց հրաժարեցնել զայն Ամերիկայի Հայոց Առաջնորդութենէն, ըստ Սահմանադրութեան 30րդ յօդուածին, 2ի դէմ 28 քուէով :

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Բ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԹԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1917 ՅՈՒԼԻՍ 29

ՈՒՍՏՐ, ՄԷՍՍ.

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Բ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1917 ՅՈՒԼԻՍ 29

ՆԻՍՏ Ա.

1. ԲԱՅՈՒՄ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ
ՍՏՈՒԳՈՒՄ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻԻԱՆԻ

Ամերիկայի Հայոց Ազգ. Երեսփ. Ժողովն իր այս շրջանի առաջին նիստն ըրաւ Յուլիս 29ին, Կիրակի առաւօտ, յաւարտ Ս. Պատարագի, ժամը 11ին, Ուստըրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Ազգ. Ժողովասրահին մէջ, նախագահութեամբ Առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Բարգէն Եպս. ի եւ ներկայութեամբ երեսուն չորս (34) երեսփոխաններու :

Նիստը բացուեցաւ նախագահ Սրբազանին աղօթքով, յորմէ յետոյ ժողովին հաւանութեամբ՝ նախորդ Երեսփ. Ժողովի Դիւանին պաշտօն յանձնուեցաւ, որ ժողովը առժամաբար կառավարէ, մինչեւ երեսփոխաններու ինքնութեանց ստուգութիւնը եւ նոր Դիւանին ընտրութիւնը :

Երեսփոխաններու ինքնութիւնն ստուգուելով, տեսնուեցաւ, որ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան թեմերէն 34 երեսփոխաններ ներկայ են ժողովին, ըստ հետեւեալ ցանկին .

ՈՒՍՏՐԻ ԹԵՄԷՆ

1. Արժ. Տ. Եղիշէ քհնյ. Գալչընճեան
2. Տիար Առաքել Եաղըճեան
3. » Պօղոս Ճորճորեան
4. » Մինաս Չամանիկեան

ՊՈՍՏՈՆԻ ԹԵՄԷՆ

5. Գեր. Տ. Շահէ Ծ. Վարդ. Գասպարեան
6. Տիար Կ. Յ. Գարակիւլեան
7. » Ովսիա Երամեան
8. » Դաւիթ Ղուկասեան

ԲՐԱՎԻՏԷՆՍԻ ԹԵՄԷՆ

9. Տիար Չաքար Դանիէլեան
10. » Պապա Խալընեան
11. » Աւետիս Տէրոյենց
12. » Վարդան Մամիկոնեան

ԼՕՐԷՆՍ—ԼՕՎԷԼԻ ԹԵՄԷՆ

13. Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Տ. Աւետիսեան
14. Տիար Մարկոս Տ. Մանուէլեան
15. » Շմաւոն Մինասեան
16. » Սերոբ Տէրտէրեան

ՖԻԼԱՏԵԼՖԻԱՅԻ ԹԵՄԷՆ

17. Արժ. Տ. Պետրոս Քհնյ. Վարդանեան
18. Տիար Նազարէթ Կիւմիւշկէրտանեան
19. » Մարգար Յ. Յովհաննէսեան

ՇԻՔԱԿՈՅԻ ԹԵՄԷՆ

20. Տիար Աւետիս Պ. Սելեան
 21. » Գրիգոր Մարգարեան
 22. » Գէորգ Պ. Թովմաճանեան

ՖՐԷՉՆՅՈՅԻ ԹԵՄԷՆ

23. Տիար Վահան Քիւրքճեան
 24. » Մաղաք Գ. Պէրպէրեան

ՖԱՈՒԼԸՐԻ ԹԵՄԷՆ

25. Տիար Սարգիս Ռստիկեան
 26. » Գէորգ Սրապեան

ՍԻՐԱՔԻՒՍԻ ԹԵՄԷՆ

27. Տոքթ. Փառնակ Աղամեան

ՔԷՆԷԹԻՔԷԹԻ ԹԵՄԷՆ

28. Տիար Սարգիս Տէմիրճեան
 29. » Գարեգին Գէորգեան

ՏԻԹՐՅՈՅԻ ԹԵՄԷՆ

30. Գեր. Տ. Սահակ Վրդ. Նազարէթեան
 31. Տիար Մինաս Արօյեան

ՔԼԻՎԼԷՆՏԻ ԹԵՄԷՆ

32. Տիար Կարապետ Փափաղեան

ՐԻՉՄԸՆՏԻ ԹԵՄԷՆ

33. Տիար Յարութիւն Գասապեան

ԼՕՍ ԷՆՃԷԼՈՍԻ ԹԵՄԷՆ

34. Տիար Արմենակ Ն. Նազարէթեան

ԾԱՆՅՈՒԹԻՒԻՒՆՔ

Ա. — Ուսարի Պատ. Հոգարարձութիւնը պաշտօնադրով մը կը տեղեկացնէր Տեղապահ Սրբազանին, թէ Թեմին երեսփոխաններէն Տիար Գեղամ Միքրօյեան հրաժարած ըլլալով, յիշեալին տեղ՝ երեսփոխան ընտրուած է Տիար Կիրակոս Սանթօյեան: Ժողովը նկատելով, որ Թեմի մը երեսփոխանին ընտրութեան իրաւունքը կը պատկանի Թեմական Ժողովին եւ նրկատելով որ Ուսարի Կեդր. Հոգարարձութիւնը՝ ժամանակի կարճութիւնը աչքի առջեւ ունենալով, առանց Թեմական Ժողովը նիստի հրաւիրելու, Երեսփոխանի ընտրութիւն ինքն կատարած է՝ ինչ որ Սահմ. օրէնքի հակառակ էր, չհաստատեց Հոգարարձութեան կողմէ կատարուած ընտրութիւնը:

Բ. — Բացի Ուսարի Երեսփ. Պ. Գեղամ Միքրօեանէն ժողովին չկրցաւ մասնակցիլ նաեւ Լօս Անճէլոսի Երեսփ. Պ. Հրաչ Երուանդ, իր ընտրութեան տեղեկագիրն եւ յանձնարարականը ժողովէն օր մը առաջ միայն հասած ըլլալով եւ Պոստոնէն իր բացակայութեան պատճառաւ կարելի չըլլալով ժամանակին իրեն լուր հասցնել:

Գ. — Իսկ Ուէսթ Հօպօքընի երեսփոխաններէն
Հայկ Սմսարեան, Կ. Չանդալեան եւ Սբրինկֆիլտի
Երեսփոխան Ն. Փիլիկեան, թէեւ նախորդ Երեսփ.
Ժողովոյ արձանագրութիւնը ստորագրած էին, բայց
բացակայ կը գտնուէին առանց սեւէ պատճառի :

Գ. — Բացակայ էր նաեւ Ֆրէզնօի Հովիւ Տ. Վարդան
Մ. Վ. Գասպարեան՝ որ թէեւ Գեր. Տ. Մուշեղ
Արքայս.ը փոխանորդ նշանակած էր, բայց Ն. Գերա-
պատուութիւնը չկրնալով գալ, իր տեղը ուրիշ մը
նշանակելու ժամանակ չէր եղած :

2. — ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻԻԱՆԻ

Անցնելով օրակարգի երկրորդ խնդրոյն, ժողովը
միաձայնութեամբ արտօնեց առժամեայ Դիւանը, որ
նշանակէ երեք անդամներով Յանձնախումբ մը, ընտ-
րելեաց եռապատիկ ցանկ կազմելու եւ Դիւանի ընտ-
րութեան հսկելու պաշտօնով : Սոյն Յանձնախումբի
անդամ նշանակուեցան Տիարք՝ Աւետիս Պ. Սելեան,
Նազարէթ Կիւմիւշկէրտանեան եւ Վահան Քիւրք-
ճեան, որոնք, խորհրդակցութենէ մը վերջ, Ատենա-
պետի ընտրութեան համար ժողովին ներկայացուցին
հետեւեալ ցանկը .

Մարկոս Տ. Մանուէլեան

Տոքթ. Փ. Ադամեան

Գէորգ Թովմաճանեան

Սոյն ցանկին վրայ գաղտնի քուէարկութիւն կա-
տարուեցաւ եւ Ատենապետ ընտրուեցաւ Տիար Մար-

Կոս Մանուէլեան, իսկ Փոխ-Ատենապետ՝ Տ. քթ. Փան-
նակ Աղամեան :

Ատենադպիրի ընտրութեան համար Յանձնա-
խումբը ժողովին ներկայացուց հետեւեալ ցանկը .

Մաղաք Գ. Պէրպէրեան
Աւետիս Տերոյենց
Շմաւոն Մինասեան

Որուն վրայ դադանի քուէարկութիւն կատար-
ուելով, Ատենադպիր ընտրուեցաւ Տիար Մաղաք Գ.
Պէրպէրեան և Փոխ-Ատենադպիր՝ Տիար Աւետիս Տե-
րոյենց :

3.— ՎԱԻԵՐԱՅՈՒՄ ՆԱԽՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Դիւանի անդամները անցան իրենց պաշտօնի դը-
լուխը : Ատենապետը յանուն Դիւանի շնորհակալու-
թիւն յայանեց Երեւոյիստաններուն՝ իր և ընկերնե-
րուն հանդէպ ցոյց տրուած վստահութեան համար :
Յետոյ հրաւիրեց Ատենադպիրը, որ կարդայ նախորդ
Նիստի (1917 Փետր . 18) արձանագրութիւնները :

Ատենադպիրը կարդաց այդ արձանագրութիւն-
ները, և ժողովը մի քանի փոփոխութիւններով,
միաձայնութեամբ վաւերացուց զանոնք :

Նկատելով որ կէսօրը մէկ ժամ անցած էր, ժո-
ղովին հաւանութեամբ Դիւանը յայտարարեց, թէ
նիստը փակուած է, և կէսօրէն վերջ, ժամը Յին, նո-
րէն պիտի բացուի նիստը և պիտի շարունակուի :

ՏԵՂԱՊԱՀ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՆԱՌԻ

Ժողովը իր Օրակարգին անցնելէ առաջ, ուշադրութեամբ լսեց Տեղապահ Սրբազանին բացման ճառը, գրաւոր, որուն օրինակը կցուած է այս արձանագրութեան վերջը: Սրբազանը պարզելէ յետոյ, թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէր Ամերիկայի Հայ Եկեղեցին եւ թէ ինքն ինչ պայմաններու տակ հաւանած էր ընդունել Տեղապահութեան առժամանակեայ պաշտօնը, յայտարարեց, որ Երեւի. Ժողովոյ գումարումով և կեդր. Վարչութեան ընտրութեամբ ինքնին կը վերջանայ իր պաշտօնը:

Ժողովը նկատի ունենալով այս ճառին կարեւորութիւնն եւ շահեկանութիւնը՝ միաձայնութեամբ որոշեց անոր նոյնութեամբ հրատարակութիւնը իբրև թուղթիկ. իսկ Տեղապահական խնդրոյն կարգադրութիւնը յանձնեց նոր ընտրուելիք Վարչութեան, իբրև անոր Սահմանադրական իրաւասութիւնը, խնդրելով միևնոյն ժամանակ Ն. Սրբազնութենէն՝ որ մինչև նոր Տեղապահի ընտրութիւնը շարունակէ վարել իր պաշտօնը:

ՆԻՍՏ Բ.

Երեւի. Ժողովի Բ. բոլ. նիստը բացուեցաւ, կէսօրէն վերջ, ժամը 3ին, նախադասութեամբ Տեղապահ Սրբազանին եւ ներկայութեամբ 34 Երեւիոխաններու:

4.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Սորհրդակցութիւններն ու վիճարանութիւնները սկսան այս հարցին շուրջ, եւ զանազան կարծիքներու փոխանակութենէն վերջ, մէկի դէմ երեսուն երեք ձայնով քուէարկուեցաւ եւ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը .

«Նկատելով որ Կեդր. Վարչութեան Տնտեսական Սորհուրդը իր հրատարականը մատուցած է Յունիս 30 թուակիր պաշտօնագրով .

«Նկատելով որ Կրօն. Ժողովի անդամներուն մեծամասնութիւնը կորսնցուցած են Կրօն. Ժողովի անդամակցութեան օրինական իրաւունքը, որով Կրօն. Ժողովն ալ դոյութենէ դադրած է .

«Նկատելով դարձեալ, որ Կեդր. Վարչութեան Սահմանադրական դոյութիւնը անհրաժեշտ է, որպէս զի Ամերիկահայ Առաքելական Եկեղեցւոյ կաղմակերպութեան ո՛չ միայն ընթացիկ դործերը օրինաց սահմանին մէջ կարգադրուին, այլ նաեւ Վարչութիւնը իր առաջին ուշադրութիւնը դարձնէ երեսփոխանական նոր ընտրութիւնները սահմանադրականօրէն կատարել տալու .

«Ուստի, ժողովը կ'որոշէ ընտրել Կեդր. Վարչութիւն մը՝ նախորդին շրջանը լրացնող, որուն պաշտօնավարութիւնը պիտի տեւէ մինչեւ նոր երեսփոխանական ժողովի գումարումը» :

Այնուհետեւ ժողովը իրաւասութիւն տուաւ Դիւանին, որ Յանձնախումբ մը նշանակէ Տնտեսական Սորհուրդի ընտրութեան համար՝ եռապատիկ ցանկ

կաղմելու պաշտօնով : Դիւանը այդ Յանձնախումբին անդամներ նշանակեց չորս անձեր , որք են Տիարք Նազարէթ Կիւմիւշկէրտանեան , Աւետիս Սելեան , Վահան Բիւրքճեան , Պապա Խալընեան եւ Շմաւոն Մինասեան , որոնք տրուած դաղարէ մը վերջ , ժողովին ներկայացուցին հետեւեալ եռապատիկ ցանկը .

Տոքթ . Կարապետ Գալուստեան—Պոստոն

Յարուժիւն Գասապեան—Ուսար

Կ . Յ . Գարակիւլեան—Պոստոն

Ջաքար Դանիէլեան—Բրավիտէնս

Առաքել Նազըճեան—Ուսար

Գէորգ Թովմաճանեան—Ուսար

Ուսիա Երամեան—Պոստոն

Պապա Խալընեան—Բրավիտէնս

Յարուժիւն Կարապետեան—Բրավիտէնս

Պողոս Ճորճորեան—Ուսար

Մարկոս Տ . Մանուէլեան—Լօւլէլ

Շմաւոն Մինասեան—Լօրէնս

Գէորգ Սրապեան—Պոստոն

Մաղաք Պէրպէրեան—Ուսար

Աւետիս Յ . Տէրոյենց—Բրավիտէնս

Առջն ցանկին վրայ դաղտնի քուէարկուժիւն կատարուելով , Տնտեսական ժողովի անդամ ընտրուեցան , Տիարք՝

Մաղաք Գ . Պէրպէրեան 25 քուէով

Տոքթ . Կ . Գալուստեան 23 »

Մարկոս Տ . Մանուէլեան 16 »

Աւետիս Տէրոյենց 11 »

Պապա Խալընեան 10 »

Ժողովը նմանապէս որոշեց՝ որ, եթէ Տնտեսա-
կան ժողովի անդամներէն հրաժարողներ գտնուին,
անոնց տեղ պաշտօնի հրաւիրուին յաջորդ առաւելա-
գոյն քուէ անող երեսփոխանները, հետեւեալ կար-
գով:

Կ. Յ. Գարակիւլեան (8) . Չաքար Դանիէլեան
(8) . Աւետիս Սեւեան (7) . Գէորգ Սրապեան (7) .
Գէորգ Պ. Թովմաճանեան (6) եւ Առաքել Նազըճեան
(6) :

Տնտես . ժողովի ընտրութեան մասնակցեցան
քանուխ երեսփոխաններ, իսկ ձեռնարկ մնացին վեց
երեսփոխաններ, որոնք են, Սահակ Վրդ . Նազարէթ-
եան, Տոքթ . Փ . Աղամեան, Մ . Չամանիկեան, Յար .
Գասապեան, Գրիգոր Մարգարեան, Մինաս Արօյեան :

Կարգը եկաւ Կրօնական ժողովի կազմութեան :
Ժողովը թերուղէմ կարծեաց փոխանակութիւններ
ունեցաւ Կրօն . ժողովի անդամոց թուոյն եւ ընտրու-
թեան եղանակին նկատմամբ : Վերջապէս երեսփո-
խաններ դիտեցին, որ նախընթաց տարիներու մէջ
Նրեափ . ժողովը՝ Կրօն . ժողովին անդամոց թիւը
հինգի իջեցուցեր եւ Նրեափ . ժողովն ուղղակի ինքն
ընտրեր է զայն, ժողովը այս անգամ ալ նախորդ ձևը
որդեգրեց եւ միաձայն հաւանութեամբ որոշեց Կրօն .
Ժողովը կազմել հետեւեալ թեմերու մէջ պաշտօնա-
վարող հովիւներէն . Պոստան, Ուստր, Բրավիտէնս,
Լօվէլ, Լօրէնս եւ Ֆիլատէլփիա :

Միեւնոյն ատեն որոշուեցաւ յաջորդ նոր երեսփ .
Ժողովի նկատառութեան յանձնել Կրօն . ժողովի կազ-

մութեան մասին Սահմանադրութեան մէջ դժուած
օրէնքին բարեփոխութիւնը :

5.— ՆԱԽՈՐԴ ԿԵԴՐ . ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Երեւի . Ժողովը այս խնդրոյն անցնելով , նկա-
տի առաւ քառամեայ Տեղեկագրի եւ Առաջնորդական
ընդհանուր Վիճակին քառամեայ ելեւմտական հաշ-
ուեցոյցի մասին Սահմանադրութեան 49րդ որոշ
յօդուածին պահանջը : Բայց որովհետեւ հրաժարե-
ցուցեալ Առաջնորդ Արսէն Ծ . Վ . Վեհունի անսաստե-
լով Երեւի . Ժողովին իրեն մասին տուած որոշման՝
տակաւին իր տրամադրութեան տակ կը պահէր ժո-
ղովական արձանադրութեանց տոմարները եւ նա-
մակները , որով անկարելի կ'ըլլար Սահմանադրու-
թեամբ պահանջեալ քառամեայ Տեղեկագիրը պատ-
րաստել տալ . ուստի այս մասին որեւէ տնօրինութիւն
ընելէ եւ որոշում տալէ առաջ , Ժողովը յանձնարարեց
իր Դիւանին միջոցաւ նորընտիր Կեդր . Վարչութեան ,
որպէս զի ամէն օրինական միջոցներու դիմէ եթէ
հարկը պահանջէ , Ազգ . Առաջնորդարանի պատկանող
զոյքերը , տետրակները եւ նամակները ձեռք բերելու
համար :

Գալով Առաջնորդական Ընդհ . վիճակի քառամ-
եայ ելեւմտական հաշուեցոյցին , Ժողովականներու
ոմանց տուած տեղեկութենէն հասկցուեցաւ , թէ հա-
կառակ Սահմանադրութեան յայտնի օրինաց , նա-
խորդ Կրօնական Ժողովին անդամները միայնակ՝
ստորագրած ու հրատարակած են քառամեայ ելեւ-

մըտից հաշուեցոյց մը, եւ դիտել տրուեցաւ իրաւամբ, որ զուտ հողեւորականներէ կազմուած ժողով մը, որպիսին է Կրօն. ժողովը, օրինական ոեւէ իրաւասութիւն չունի հաշուեցոյց պատրաստելու եւ վաւերացնելու:

Այնուհետեւ խօսք առին երկու երեսփոխաններ, որք հրաժարեցուցեալ Առաջնորդին օրով Տնտեսական ժողովի Գանձապետներ ընտրուած էին. եւ պարզեցին, թէ Արսէն Վարդապետ իր պաշտօնավարութեան ընթացքին երբեք չէր թոյլատրած, որ Տնտես. ժողովին Գանձապետները իրապէս վարեն իրենց վստահուած պաշտօնը. այլ ինքն եղած է բոլոր մուտքերը դանձողը եւ ծախսերը ընողը եւ արձանադրողը, որով երկուքն ալ հրաժարած են իրենց պաշտօնէն՝ բողոքելով Առաջնորդին այդ ապօրէն միջամտութեան դէմ: Եւ մանաւանդ զարմանք յայտնեցին, թէ Տնտես. ժողովի կրկին դանձապետներուն անձանօթ քառամեայ ելեւմտից հաշիւներ՝ ինչքան փութկոտութեամբ ստորագրուած եւ հաստատուած էին քանի մը անպաշտօն եկեղեցականներու կողմէն:

Երեսփոխանական ժողովը նկատելով, որ արդէն հաշուական խնդիրը զլխաւորներէն մէկն էր հրաժարեցուցեալ Առաջնորդին մասին եղած շարունակական դանդապաներուն եւ ամբաստանութիւններուն, հարկ չտեսաւ այդ մասին ոեւէ կարգադրութիւն ընել, մինչեւ որ հաշուական տոմարները ձեռք բերուին:

Նոյն միջոցին երեսփոխաններէն ոմանք յիշեցուցին ժողովին, թէ նախորդ Կեդր. Վարչութեան Տնտեսական ժողովին Ատենապետը, Տոքթ. Փառնակ

Աղամեան, 1916 Նոյմ. 28—31 Երեսփ. գումարման նիստերէն միոյն մէջ՝ Արսէն Վրդ.ի հաշիւներուն պատասխանատուութիւնը ստանձնած էր :

Տեղապահ Սրբազանը խօսք առնելով յայտնեց ժողովին, թէ իրեն տրուած տեղեկութեան մը վրայ, պարտականութիւն համարած էր ստուգել թէ հրաժարեցուցեալ Առաջնորդը ո՞րքան դրամ յանձնած էր Տ.քթ. Փ. Աղամեանին : Այս վերջինը իրեն դրուած նամակի մը մէջ խոստովանած էր, թէ երեք հարիւր տուարի չափ գումար մը կայ իր քով, որ կը պատկանի Առաջնորդական Սնտուկին : Տ.քթ. Փ. Աղամեան եւս յատենի ժողովոյ կրկնեց Նախագահին տուած տեղեկութիւնը, եւ աւելցուց թէ այդ գումարը աւանդ մըն է իր քով եւ չկրնար յանձնել այս ժողովին, որ երեսփոխանական խորհրդակցութիւն մըն է եւ ոչ թէ Երեսփ. ժողով :

Տ.քթ. Աղամեանին դիտել տրուեցաւ, որ ինքը մինչեւ այդ վայրկեանը Երեսփոխանի մը հանգամանքով ներկայ գտնուած էր ժողովասրահին մէջ, Երեսփոխաններու շարքին ստորագրելով իր անունը եւ անոնց հետը նստելով եւ մասնակցելով ժողովին գործառնութեանց. եւ թէ իր մօտ գտնուող 300 տուարի չափ գումարը աղգային գումար մըն է եւ ոչ անհատական եւ ինքը պարտաւոր է յանձնել զայն այս ներկայացուցչական ժողովին որոշելիք տեղը :

Այս պահուն Տ.քթ. Փառնակ Աղամեան մեկնեցաւ. բայց ժողովը ընդունելով բերուած առաջարկ մը՝ որոշեց, որ Տ.քթ. Փառնակ Աղամեան իւր քով գտնուած այդ գումարը, որ Աղգ. Առաջնորդարանին

կը պատկանի, յանձնէ Տեղապահին միջոցաւ նորըն-
տիր Տնտեսական Ժողովի Գանձապետին :

6.—ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ
ԵԼ ԵՒՄ ՏԱՅՈՅՑԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Միաձայն հաւանութեամբ իրաւունք տրուեցաւ
նորընտիր Կեդր. Վարչութեան, որպէս զի Ազգ. Ա-
ռաջնորդարանի նոր շրջանի ելեւմտացոյցը պատրաս-
տէ նախորդին համաձայն եւ ի դործ դնէ :

7.—ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Տարիներէ ի վեր ամէն կողմէ խնդրոյ առարկայ
դարձած այս խնդիրը, երբ որ վերստին եկաւ սեղա-
նին վրայ, խնդրոյն անցեալը իր լայն զիծերուն մէջ
ներկայացուցին ոմանք երեսփոխանք, բունն դանդա-
ստանելով միանգամայն, որ նախկին Առաջնորդ Ար-
սէն Վրդ. բոլորովին անտես ըրած էր Երեսփ. Ժո-
ղովէն այս մասին իրեն եղած յանձնարարութիւննե-
րը՝ իբր դործադիր պաշտօնեայի : Եւ նկատի առնե-
լով վերաքննութեան ստիպողականութիւնը, կար-
ծիքներու փոխանակութենէ ետքը, առաջարկուե-
ցաւ եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ որոշ-
ուեցաւ, որ նորընտիր Կեդր. Վարչութիւնը Յանձ-
նաժողով մը ընտրէ՝ Սահմանադրութիւնը վերաքնն-
նելու պաշտօնով, որպէս զի կարելի ըլլայ օր առաջ
լրացնել վերաքննութեան դործը և վերաքննեալ Սահ-

մանադրութիւնը դրկել Ամենայն Հայոց Հայրապետին ի հաստատութիւն :

8.—Ա.գգ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ ՀԱՅՑ .
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՆԴԻՐ

Երեք տարի առաջ՝ Երեսփ. Ժողովէն ընտրուած Վիադոր Յանձնախումբին արդամներէն Տիար Մարկոս Տ. Մանուէլեան, Ա.գգ. Միութեան կազմութեան նկատմամբ մանրամասն տեղեկութիւններ տուաւ, եւ ժողովին թողուց լիազօրներու մասին փոփոխութիւն մը ընելու կամ չընելու պարագան :

Երեսփ. Ժողովը լսելէ ետքը տրուած բացատրութիւնները, որոշեց Ա.գգ. Միութեան Կեդր. Մարմնոյն մասնակցող Երեսփոխանական ժողովի Երեք լիազօր ներկայացուցիչները (Մուշեղ Արք. Սերոբեան, Շահէ Մ. Վրդ. Գասպարեան եւ Մարկոս Տ. Մանուէլեան) վերահաստատել իրենց պաշտօնին մէջ, հրահանգ տալով որ շարունակեն իրենց ներկայացուցչութիւնը մինչեւ յաջորդ Երեսփ. Ժողովին դումարումը, եւ այն ատեն միայն որոշել թէ Հայց. Եկեղեցւոյ ներկայացուցիչներ՝ Երեսփոխանական ժողովի՞ կողմէն պէտք է ընտրել թէ Կեդր. Վարչութեան կողմէն :

9.—ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԽՆԴԻՐ

Շիքակօի Երեսփոխան Տիար Աւետիս Պ. Սելեան՝ թելադրութիւն բերած էր ժողովին, որ Ամերիկայի մէջ Հայց. Եկեղեցւոյ համար, ժամանակին ու մեր

հողեւոր ու Ազգ. պէտքերուն յարմար դաստիարակութեամբ պատրաստուած եկեղեցականներ ունենալու խնդիրը ստիպողաբար նկատի առնուի եւ կարգադրութիւն մը ըլլայ այս մասին :

Այս կարեւոր խնդրին շուրջ կարծիքներ յայտնուելէ ետքը, միաձայնութեամբ որոշուեցաւ, որ «Ամերիկայի մէջ դանուող ամէն տեսակ միջոցներ եւ դիւրութիւններ հետապնդելու եւ դանելու գործը Երեսփոխանական Ժողովը կը յանձնէ Գեր. Տ. Բարդէն Նպս. Կիւլէսէրեանի, որ ընտրելով 3—5 հոգիէ բաղկացեալ Յանձնախումբ մը, միասին վարեն յիշեալ գործը, որպէս զի արժանաւոր եկեղեցական պաշտօնեաներ պատրաստուին թէ՛ հոս Ամերիկայի մէջ եւ թէ՛ յառաջիկային երկրին մէջ ծառայելու նըպատակաւ» :

10.—ԱՄԵՐԻԿԱ, ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐ

Փիլատէլֆիոյ Երեսփոխաններէն Տիար Նազարէթ Կիւմիւշկէրտանեան՝ առաջարկ բերած էր այս երկրին մէջ հայ մանուկներու դպրոցի խնդիրը լրջօրէն ուշադրութեան առնելու : Եւ խօսք առնելով, դիտել տուաւ, ա) .— Հայ մանուկներուն Հայերէն լեզուն եւ ազգ. եկեղեցական անհրաժեշտ նախնական ծանօթութիւնները սորվեցնելու համար պէտք է հայ դպրոցներ բանալ, բ) .— Արդէն բացուած եւ գոյութիւն ունեցող դպրոցներուն համար միօրինակ եւ կանոնաւոր ծրագիր մը մշակել :

Երեսփի . Ժողովը ուրախութեամբ իւրացուց այդ ազգօգուտ առաջարկը , եւ խորհրդակցութիւններ ու կարծեաց փոխանակութիւններ կատարելէ վերջ , խմբադրուեցաւ բանաձեւ մը՝ որ միաձայնութեամբ քուէարկուեցաւ ժողովին կողմէ . ահա այդ բանաձեւը .

«Առաջարկուած եւ ընդունուած է , որ Երեսփոխանական Ժողովի կողմէն յանձնարարուի Կեդր . Վարչութեան , որպէս զի իր առաջին նիստին մէջ իսկ ընտրէ եւ կազմէ Ուսումնական Խորհուրդ մը , պաշտօն տալով անոր ստեղծել՝ Սմերիկայի մէջ Հայ մանուկներուն համար Հայերէն լեզուի եւ Հայ եկեղեցւոյ վերաբերեալ անհրաժեշտ դիտելեաց ուսուցման համար կանոնաւոր եւ միօրինակ դրութիւն մը , եւ ջանադիր ըլլայ լաւագոյն ուղղութեան տակ դնել Հայ մանուկներու ազգային դաստիարակութեան գործը» :

11 .— ՀԱՇՏԱՐԱՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՒՄԻ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Պոստոնի Թեմին Երեսփոխաններէն Գեր . Շահէ Ծ . Վրդ . Գասպարեան խօսք առնելով , Երեսփոխաններու ուշադրութիւնը հրաւիրեց մէկ քանի իրողութեանց վրայ , որոնց անտեսումը , ըսաւ , կրնայ օրինական ըլլալ , բայց ո՛չ արդար եւ օգտակար՝ հանրային գործի մը մէջ , որպիսին է Երեսփի . Ժողովին աշխատութիւնը : Յայտնեց թէ Պոստոնի Թեմական Ժողովը գրաւոր յանձնարարութիւն տուած է իր Երեսփոխաններուն , որպէս զի անոնք աշխատին , ա-

ուանց Սահմանադրական օրինաց տրամադրութիւններուն դէմ մեղանշելու, Երեսփոխանական Ժողովի երկու հատուածներուն միջեւ համերաշխութիւն մը գոյացնել՝ կարելի եղած զիջողութիւններով :

Այսօրուան նիստերուն ներկայ գտնուող Երեսփոխաններս, ըսաւ, Տ. Շահէ Վրդ., տարակոյս չկայ որ բացարձակ մեծամասնութիւն կը կազմենք. եւ մեր պարտականութիւնները կատարեցինք, կազմալուծեալ Վարչութեան տեղ նոր կեդր. Վարչութիւն մը ընտրելով, որպէս զի եկեղեցական կազմակերպութիւնը վերստանայ իր կանոնաւոր ու Սահմանադրական ուղղութիւնը : Այսու հանդերձ չենք կրնար անդիտանալ, որ՝

1.— Այս Ժողովին անդամներէն մաս մը, թէեւ փոքրամասնութիւն, եւ սակայն մեր ընկերներն են եւ չեկան այս Ժողովին. եւ ոչ միայն չեկան, այլ նաև ինչպէս Ժողովէն առաջ ըրին նոյնպէս հաւանական է որ այս Ժողովէն ետքն ալ պիտի շարունակեն խնդրոյ եւ վէճի առարկայ դարձնել բանիւ եւ գրով՝ մեր օրէնքի համեմատ եւ յօդուտ եկեղեցւոյ տուած որոշումներն եւ ըրած կարգադրութիւնները :

2.— Երկրորդ իրողութիւնը այն է, որ այսօրուան Երեսփոխանական Ժողովի երկու նիստերուն ալ՝ մինչեւ ժամը հինգուկէս կամ վեց մասնակցող վեց Երեսփոխաններ, ջանացին իրենց բացակայ ընկերներուն տեսակէտները պարտադրել այս Ժողովին վրայ եւ չյաջողելով, մեկնեցան այս սրահէն :

3.— Երրորդ իրողութիւնն այն է, որ նախկին Առաջնորդը՝ այս Ժողովին մեծամասնութեան քուէով

իրեն դէմ տրուած վճիռին վերջնական հանգամանքին խելամտելով՝ վերջապէս, Ուսարի մօտերը՝ ազարակ մը դնած եւ հոն քաշուած է եւ երկրադործութեամբ եւ հաւարածութեամբ կ'դրադի, բացարձակապէս թողուցած իր հոգեւորական կոչման դործերը: Եւ իրեն հետ միասին ազարակին մէջ առանձնացած են Տ. Տրիփոն եւ Տ. Տիրայր Վարդապետները, որոնց առաջինը Կրօն. Ժողովի Ատենապետն էր, իսկ երկրորդը՝ Ատենադպիրը:

4.— Չորրորդ՝ Արսէն Վրդ. Վեհունի այսուհանդերձ դեռ կը յամառի ինքզինք ճանչնալ «հրաժարեալ Առաջնորդ», եւ օգտուելով անդոյ Կրօն. Ժողովի մը որոշումներէն եւ վերը ակնարկուած բացակայ երեսփոխաններու պաշտպանութեան ճիղերէն, փակած է Ազգային Առաջնորդարանին դուռները եւ բանալին դրպանը դրած եւ հեռացած է: Խնդիրը շէնքին վրայ չէ անշուշտ. բայց անհրաժեշտ է որ Ժողովը նկատի առնէ թէ Ազգային Առաջնորդարանի դիւանական գոյքերը, կնիքը, հաշուական տոմարները, արձանագրութիւնները եւ ամէն կարգի նամակներ եւ պաշտօնական գրութիւններ այսօր կը մընան փակուած, բանալիներու տակ, որոնք կը դրանուին այլեւս անհատ եւ անպաշտօն եկեղեցականի մը դրպանը: Գուք այսօր նոր Կեդր. Վարչութիւն մը ընտրեցիք եւ անոր վրայ դրիք այդու իսկ խառնակ ներկայ կացութեան մը յատուկ կարեւոր եւ պատասխանատու աշխատութիւնները: Բայց պէտք է դիտնաք, որ ցորչափ Կեդր. Վարչութիւնը իր տրամադրութեան տակ չունենայ դիւանական յիշեալ գոյ-

քերը, որոնք ազգին սեփականութիւնն են, իր աշխատութիւնները մեծ դժուարութեանց պիտի բախին: Վերջին ամիսներուն ամէն կողմերէ մկրտութեանց եւ ամուսնութեանց վկայականներ ուղեցին Տեղապահէն, եւ նա չկրցաւ դրկել զանոնք:

5.— Բաց աստի Ազգիս Վեհ. Հայրապետը տակաւին չպատասխանեց այս ժողովէն Ն. Ս. Օծութեան ուղղուած հեռագրին եւ Արսէն Վրդ. ին Առաջնորդական պաշտօնէ այս ժողովին որոշմամբ հրաժարեցուցման իրողութիւնները պարզաբանող տեղեկագրին: Որքան ալ Ռուսիոյ տակնուվրայութեան հետեւանք եղած ըլլան թղթակցութեանց յասպաղումըն ու ընդհատումը, եւ սակայն ժողովը միջոցներ պէտք է ձեռք առնէ Ն. Ս. Օծութեան ուշադրութիւնը ընդ փոյթ հրաւիրելու այս խնդրոց վրայ եւ իր հեղինակաւոր ձայնը լսեցնելու: Արսէն Վրդ. ի տրամադրութեան տակ կը մնան դեռ անցեալ տարի Վեհ. Հայրապետէն Ամերիկայի Հայութեան ուղղուած մէկ երկու խիստ կարեւոր Կոնդակներ, որոնք իրենց շօշափած կենսական եւ այժմէական խնդիրներով՝ բոլոր Ամերիկայի Հայութեան սեփականութիւնն են եւ անհատ մը զանոնք պահելու, դարակի մէջ բանտարկելու իրաւունքը չունի:

Դեռ անցեալ օր, Արսէն Վրդ. «Հայրենիք» թերթին մէջ հրատարակուած իր բաց-նամակին մէջ կը յայտնէր, թէ ո՛չ միայն Վեհ. Հայրապետը իրեն հրաժարականները չէ ընդունած, այլ մանաւանդ մօտերս էջմիածնէն իրեն գրութիւններ հասած են իբրեւ Ամերիկայի Հայոց Առաջնորդի: Չենք գիտեր, թէ իր

ըսածները ո'րչափ ստոյգ են, վասն զի պատճառներ ունինք կասկածելու: Բայց եթէ այդ ըսուածները ուղիղ են, ասիկա ցաւալի իրողութիւն մը եւս յերեւան կը բերէ: Այս Ժողովը պէտք է իր վճռական ձայնը պարզ կերպով հասցնէ Ազգիս Վեհ. Հայրապետին, որ տարակոյս չկայ, թէ ո'րչափ ալ զբաղեալ ըլլայ Ազգային ներկայ ճգնաժամի կարեւոր հարցերով, պարտք պիտի համարի լսել մեզ այս խնդրոյն մէջ. եւ կասկած չկայ որ պիտի հաստատէ այս Ժողովին վճիռը:

Տ. Ծահէ Վրդ. ամփոփելով իր խօսքը, առաջարկեց նախ կազմել Հաշտարար Յանձնախումբ մը, եւ պաշտօն տալ անոնց բացակայ երեսփոխաններու հետ ուղղակի կամ անուղղակի միջոցներով տեսնուիլ հասկցողութեան մը դալ. եւ մա'նաւանդ անոնց եղբայրարար բացատրել եւ համոզել, թէ Երեսփ. Ժողովի մեծամասնութիւնը Սահմանադրութեամբ իրեն տրուած իրաւունքին համեմատ շարժած է 1917 Փետրվ. 18ի Նիստին մէջ:

Երկրորդ, Երեսփ. Ժողովը միւս կողմէ արտօնութիւն տայ այդ Յանձնախումբին, որ իր պատշաճ դատած միջոցներով Ազգիս Վեհ. Հայրապետին ուղարկութիւնը հրաւիրէ Ամերիկահայոց Առաջնորդական խնդրին վրայ, որպէս զի Ն. Ս. Օծութիւնը լսելի ընէ իր վճռական ձայնը:

Երրորդ, Երեսփ. Ժողովը իր որոշ կամքը պէտք է յայտնէ իր ընտրած լրացուցիչ Կեդ. Վարչութեան, որպէս զի Վարչութիւնը ամէն օրինաւոր միջոցները գործածէ, եւ ի պահանջել հարկին օրինական միջոցի

դիմէ, Առաջնորդարանին եւ Աղղին պատկանող դիւանական գոյքերուն տէր դառնալու համար:

Շահէ Վրդ. կրկնեց, թէ այս առաջարկները կ'ընէ Պոստոնի Թեմական Ժողովին իր Երեսփոխաններուն տուած գրաւոր յանձնարարութեանց մէկ յօդուածին համաձայն, եւ նկատի առնելով երեսփոխանական նոր ընտրութեանց առթիւ բոլոր թեմերուն համերաշխ գործունէութեան պէտքը, եւ ամէն բանէ աւելի՝ Սահմանադրական օրէնքի եւ ժողովոյ հեղինակութիւնը պահպանելու համար:

Երբ Շահէ Վրդ. աւարտեց իր խօսքը, Երեսփոխաններ սկսան յայտնել իրենց դադափարները:

Սօսք առաւ Ուսարի Թեմին Երեսփոխաններէն Տիար Առաքել Եաղըճեան, եւ յայտնեց թէ Ուսարի Առաջնորդարանի շէնքը կը պատկանի Ուսարի Եկեղեցւոյն եւ նախկին Առաջնորդը վարձք կը վճարէր այդ շէնքին համար: Երբ Արսէն Վրդ. եւ իր երկու վարդապետ ընկերները ազարակ քաշուեցան, Ուսարի Հոգարարձութիւնը, իբրեւ շէնքին օրինաւոր սեփականատէրը, դիմում ըրաւ Արսէն Վրդ.ին, որ իր անձնական գոյքերը վերցնէ եւ շէնքը յանձնէ մեզի՝ ըստ Տեղապահ Ս.ի հրահանգին գործածելու համար: Բայց նա մեր նամակին մերժողական պատասխան մը տուաւ, եւ այդ պատասխանին պատճէնը մենք ժամանակին հաղորդեցինք Տեղապահին: Ուսարի Կեղր. Հոգարարձութիւնը, պէտք է դիտնաք, որ չուզեր օրինական միջոցի դիմել, քանի որ ասկից առաջ ալ, ուրիշ առիթներով, երկու անգամ նոյն շէնքէն ըմբոստներ դուրս հանելու համար դիմումներ

եղած են տեղական իշխանութեանց մօտ, եւ ազգին համար շատ անպատուարեր տեսարաններ պարզուած են, որոնց կրկնութիւնը փափաքելի չէ անշուշտ: Արդ, ժողովիդ կը մնայ որոշել խնդրոյն Ազգին պատուարեր եղանակով լուծումը:

Երեսփոխաններէ ոմանք դիտել տուին, որ շէնքի խնդիրը պէտք է դատել դիւանական դոյքերու խնդիրէն, իսկ ուրիշներ ըսին, թէ Ուստրի Հողաբարձութիւնը կրնայ իր շէնքին տիրանալ, առանց դիմելու օրինական միջոցներու:

Փրէզնոյի Երեսփոխան Տիար Վահան Քիւրքճեան խօսք առնելով, ըսաւ թէ խումբ մը երեսփոխաններուն այս ժողովէն բացակայելը ցաւալի իրողութիւն մըն է իսկապէս: Անոնք համոզուած են, թէ մենք հակառակ օրինաց դորձած ենք 1917 Փետր. 18ի նիստին մէջ հրաժարեցնելով Առաջնորդը: Իսկ մենք կը խորհէինք եւ տակաւին կը խորհէինք, թէ օրէնքի տրամադրութիւնը կատարելապէս մեզի իրաւունք կուտայ: Եթէ Ռուսիոյ շփոթութիւնները չըլլային, եւ կանոնաւոր յարաբերութիւն ունենայինք Էջմիածնի հետ, ցայսօր Վեհ. Հայրապետէն պատասխան մը կուղար եւ ամէն խնդիր կը լուծուէր: Արդ՝ ներկայ պայմաններու մէջ, մեզի եւ մեր ընդդիմադիրներուն կը մնայ համաձայնութեան մը դալ: Խնդիրը օրէնքադիտական մեկնութեան մը կամ քէֆնիֆական մանրամասնութեան մը վրայ է. քանի որ անոնք ալ կը պնդեն, թէ մենք Արսէն Վրդ.ը չէ որ կը պաշտպանենք, այլ օրէնքը: Ուստի, ինչպէս ուրիշ առթիւ, հոս ալ չեմ վարանիր առաջարկելու, որ եթէ Երեսփ.

Ժողովը ուզէ, այս եւ այն հատուածներէ երկու ներկայացուցիչներ կը դիմեն ամերիկեան դատարան մը եւ օրինական մեկնութիւն մը կը խնդրեն, եւ տրուած այդ վճիռը ընդունելի կ'ըլլայ երկու կողմերուն ալ. որով ոեւէ խնդիր չմնար: Եւ ես կատարելապէս վրատահ եմ, թէ Երեսփ. Ժողովին մեծամասնութեան տուած որոշումին ի նպաստ պիտի ըլլայ այդ դատարանական բարձրագոյն մեկնութիւնը: Ամերիկեան եկեղեցիներու մէջ ալ կը պատահին այս տեսակ վէճեր: Ասիկա կուիւ չէ. անպատուութիւն մը չկայ մեկնութեան մը համար բարձրագոյն եւ էն հեղինակաւոր դատարանի մը դիմելու մէջ. կատարեալ քաղաքավարութեամբ եւ խաղաղ կերպով կրնանք հարթել այս դժուարութիւնը, եթէ Ժողովը ուզէ:

Վիճարանութիւնները շարունակուեցան: Դիւանը ի վերջոյ կրկնեց բերուած առաջարկները եւ միաձայնութեամբ որոշուեցաւ կազմել Հաշտարար Յանձնախումբ մը, որ իր յարմար դատած միջոցներով աշխատի, առանց զոհելու Սահմանադրութեան բացորոշ տրամադրութիւնները, ամէն օրինաւոր միջոցներով աշխատիլ, որ զանազան խնդրոց շուրջ անհամաձայն ու առարկող երեսփոխաններու եւ մեծամասնութեան միջեւ համերաշխ գործակցութիւն մը կարելի եւ պատրաստ ըլլայ՝ նոր Երեսփ. ընտրութիւններէն առաջ: Ասկից զատ, ընտրուելիք Յանձնախումբին անդամները դիւանին հետ միասին խորհրդակցութեամբ՝ հարկ եղած ձեռնարկները ընեն յստակօրէն պարզելու համար խնդիրները Ազգիս Վեհ. Հայրապետին եւ անմիջական տնօրինութիւն մը խնդրեն:

Գալով Առաջնորդարանի դիւանական գոյքերուն , ժողովը իր կամքը յայտնեց միաձայնութեամբ եւ յանձնարարեց նորընտիր Վարչութեան , որ ամէն բարոյական , օրինաւոր , եւ եթէ պէտք ըլլայ օրինական միջոցի ալ դիմէ , Առաջնորդարանի դիւանական գոյքերուն տէր դառնալու համար :

Այնուհետեւ հաշտարար Յանձնախումբի անդամոց ընտրութեան ձեռնարկուեցաւ եւ միաձայն հաւանութեամբ նշանակուեցան Տիարք Վ . Քիւրքճեան , Մ . Տ . Մանուէլեան եւ Մ . Պէրպէրեան :

12.—ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւոյ . ժողովը միաձայնութեամբ որոշեց իր դիւանին միջոցաւ շնորհաւորել Ամերիկայի ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ , եւ բարեյաջող եւ ազդօգուտ գործունէութիւն մաղթել , հանդերձ յարատեւութեամբ :

Նմանապէս միաձայնութեամբ եւ յոտնկայս շնորհակալութիւն յայտնեց ժողովը ի դնահատութիւն Տեղապահ Սրբազանին , իր մօտ երկու ամիսներ ժողովիս օգնելու համար յանձն առած աշխատութեանց եւ բարոյական գոհողութեանց :

Նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց ժողովը Ուստրի Պատ . Հողարարձութեան՝ Երեւոյի սանութեան ցոյց տուած գեղեցիկ հիւրասիրութեան համար :

Որոշուեցաւ այս երկու նիստերու արձանագրու-
թիւնը վաւերացնել, եւ եղած դործառնութեանց մա-
սին տեղեկագիրք մը ղրկել Ամենայն Հայոց Ս. Կա-
թողիկոսին, Դիւանի կողմէն :

Ժողովը փակուեցաւ Նախագահ Սրբազանին ա-
ղօթքով, երեկոյեան ժամը 9.30ին :

Դիւան Երեսօրիսանական Ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

ՄԱՂԱՔ Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ՄԱՐԿՈՍ Տ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՏԵՂԱՊԱՀ Տ. ԲԱԲԳԷՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԲԱՅՄԱՆ ՃԱՌԸ

Զոր Կարդաց 1917 Յուլիս 29, Կիրակի

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Երեսփոխանական Ժողովին Մէջ

Յուլիս 29ին Ուսար գումարուած Ամերիկահայ
Երեսփոխանական Ժողովոյ որոշման համաձայն՝
հրատարակութեան կուտանք Առաջնորդական Տեղա-
պահ՝ Գեր. Տ. Բարդէն Սրբազանի Ժողովին ներկա-
յացուցած տեղեկագիրը՝ նոյնութեամբ:

Ի Դիմաց Ամեր. Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

ՄԱՂԱՔ Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Մ. Տ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

30 Յուլիս, 1917

Տեարք Երեսփոխանք.

Այս տարի, Երեսփոխանական Ժողովդ իր Փետր. 18ի նիստին մէջ, Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան հրատարակեցնելով Գեր. Տ. Արսէն Ծ. Վ. Վեհունին, ըստ սահմանադրութեան պաշտօն տուած էր Կեդր. Վարչութեան, որպէս զի տրուած որոշման թուականէն մինչեւ տասնըհինգ օր Տեղապահ մը ընտրէ: Եւ եթէ Կեդր. Վարչութիւնը չկատարէր իր այս սահմանադրական պարտքը, նշանակուած ժամանակամիջոցին, ժողովդ իրաւունք տուած էր իր Դիւանին, որպէս զի Տեղապահութեան պաշտօնին հրաւիրէր Ֆրէզնոյի Հոգեւոր Հովիւ Գեր. Տ. Վար-

դան Մ . Վ . Գասպարեանը , եւ եթէ Ն . Գերապատուութիւնը հրատարէր , Գաղատիոյ Առաջնորդը , Հայաստանեայց Եկեղեցւոյ այս տրուպ սպասաւորը :

Գիւանը դորձադրեց իրեն տրուած հրահանգը . որովհետեւ Կեդր . Վարչութիւնը չէր յարգած ժողովոյդ տուած որոշումը :

Այդ միջոցին ես Ֆրէզնօ կը դանուէի : Գիւանը իր թիւ 6 եւ Մարտ 21 թուակիր պաշտօնագրով ժողովոյդ որոշումը հաղորդեց Վարդան Վարդապետին : Նորին Գերապատուութիւնը իւր Մարտ 27 թուակիր պատասխանագրով շնորհակալութիւն յայտնեց եւ վճռական կերպով հրատարեցաւ ըսելով .

—«Աւելորդ կը համարիմ մէջ բերել այն բազմաթիւ պատճառները , որոնք բացարձակ արդելք կը հանդիսանան ինձ ընդունելու այսպիսի ժամանակի մը մէջ այնքան բազմապիսի պատասխանատուութիւն ունեցող պաշտօն մը :

«Հետեւարար ցաւ ի սիրտ հարկադրուած կու դամ ներկայացնել իմ վճռական հրատարականս Ամերիկ . Առաջ . Տեղապահի պաշտօնէն» :

Գիւանը իրեն տրուած հրահանգին համաձայն , իր Ապրիլ 16 թուակիր պաշտօնագրով , հաղորդեց ինձ ժողովոյդ որոշումը՝ զիս հրաւիրելով Ամերիկայի Հայոց Տեղապահութեան պաշտօնին :

Ես տեղեակ էի բոլոր խնդիրներուն , որոնք յառաջ բերին Առաջնորդին հրատարեցումը , դիտէի թէ նշանակելի թուով Երեսփոխաններ ժողովը թողած մեկնած էին , տեսած էի այս մասին թեր ու դէմ դրուածները Հայ թերթերու մէջ , մա՛նաւանդ առձեռն

ունէի հրաժարեցուցեալ Առաջնորդի կողմէն իր մասին տրուած որոշման առթիւ հրատարակուած ծանօթ «Պաշտօնական քացատրութիւնը, ուղղեալ Ամերիկայի Հայց. Առաք. Եկեղեցւոյ բոլոր հովիւներուն, հոգաբարձութեանց եւ Եկեղեցւոյ հարագատ գաւակներուն», որմէ օրինակ մըն ալ ուղղակի ինձ դրկուած էր: Իսկ այդ «Պաշտօնական Բացատրութեան» մէջ ո՛չ միայն Սահմանադրութենէն մատնանիչ եղած յօդուածներ խեղաթիւրուած էին, այլ նաև «ապօրէն» հռչակուած էր ժողովը, եւ սպառնալիք կար այն Եկեղեցականին դէմ, որ պիտի համարձակէր այդ «ապօրինի ժողովի որոշումով Տեղապահութիւնը ստանձնել»:

Կացութիւնը շատ ցաւալի էր և շատ ալ փափուկ. այսինքն՝ մէջտեղ որոշում մը կար օրինաւորապէս տրուած, որուն դէմ առարկութիւն եւ բողոք ունէին թէ՛ հրաժարեցուցեալ Առաջնորդը եւ թէ՛ նշանակելի թուով Երեսփոխաններ: Միևս կողմէն Երեսփոխանական ժողովը իր որոշումը դործադրել տուած էր իր Գիւանին, Վարդան Վրդ.ի վճռական հրաժարումէն ետքը զիս հրաւիրելով Տեղապահութեան պաշտօնին:

Եւ ես Ամերիկայի Հայոց Եկեղեցւոյն համար օգտակար համարեցի սպասել, որ հակառակամարտ կիրքերը հանդարտին եւ ես կարող ըլլամ իրաց վիճակը անձամբ քննել յեղւոյն վրայ եւ ըստ այնմ որոշում տալ ինձ եղած առաջարկի մասին. որովհետեւ կ'ուզէի անձամբ ստուգել թէ ո՛րչափ իրաւացի կամ Սահմանադրութեան համաձայն էին եղած բողոքներ. ասկէ զատ՝ չէի ուզեր անել կացութեան մը մատնել

Երեսփոխանական Ժողովի և և տեղի տալ անիշխանութեան՝ մերժելով առժամանակեայ պաշտօնի մը ծառայութիւնը, ի սէր Եկեղեցւոյ, որ կ'սպասուէր ինձմէ՝ Վարդան Վրդ.ի հրաժարելէն ետքը :

Ահա այս պատճառաւ Գիւանիդ Ապրիլ 16 թուակիր պաշտօնադրին պատասխանեցի Ապրիլ 27ին և և ըսի .

— «Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը այնպիսի փափուկ վիճակի մը մատնուած է, որ կը փափաքիմ անձամբ պատասխանել Գիւանիդ՝ ինձ եղած առաջարկի մասին . հետեւարար հաճեցէք սպասել իմ Պատոն վերադարձիս : »

Տեարք Երեսփոխանք, ինչպէս որ դիտէք, այդ միջոցին կատարուեցաւ Ամերիկայի Հայոց կեանքին մէջ ամենէն ուրախառիթ իրողութիւն մը . այն է Հայ Ազգային Միութեան կազմութիւնը, և ևս կը հաւատայի թէ այս Միութիւնը վերջ տուած պիտի ըլլար այս առաջնորդական խնդրին ալ . որովհետեւ Արսէն Ծ. Վ. Վահուանիին դէմ եղած գլխաւոր դժգոհութիւնը Երեսփոխանական Ժողովին մէջ՝ յառաջ եկած էր համերաշխութեան ծանօթ խնդրին հանդէպ Ն. Գերապատուութեան բռնած անվստահելի դիրքէն : Եւ ևս՝ իբրև անդամ Ազգային Պաշտպանութեան Միութեան՝ բոլորովին դիտակ և և տեղեակ էի այն տխուր դերին, զոր Ն. Գերապատուութիւնը կատարեց այդ ցանկալի միութիւնը կամ համերաշխութիւնը ձախողեցնելու դիտումով . և ևս ասիկա յանդեցաւ իր հրաժարեցուցման :

Այս խնդիրը, որ ներքնապէս կապուած էր Հայ

Ազգային Միութեան կազմութեան հետ, բարերախոտարար կամ դժբախտարար, Միութեան կազմութեան ատեն խնդիր եղած է, բայց նկատի չէ առնուած, սա սլաւոճառարանութեամբ, որ «Առաջնորդական խնդիրը եկեղեցական խնդիր մըն է, եւ Միութեան հետ կապ չունի», եւ դժուարութիւնը այս կերպով լուծելէ ետքը՝ Միութիւնը յաջողած է:

Ես, եթէ Միութեան կազմութեան ատեն բացակայ չդանուէի Պոստոնէն, պիտի աշխատէի որ առաջնորդական խնդիրն ալ լուծուէր լմննար, որպէս զի Ամերիկայի Հայերը ուղղակի կամ անուղղակի ոչ մէկ դժուարութիւն կամ ցաւ չունենային մեր համազգային ցաւէն զատ, քանի որ Հայ Ազգային Միութեան շնորհիւ՝ շատ մը խնդիրներ թաղուած էին մոռացութեան մէջ:

Եւ այս միամիտ յուսով էր որ Քալիֆորնիայէն վերադառնալու ատեն, Շիքակօի մէջ երբ բախտ ունեցայ հանդիպելու Եզիպտոսի մեր երեք յարգելի պատգամաւորներուն, խօսեցայ իրենց առաջնորդական խնդրին զանց առնուելուն համար Հայ Ազգային Միութեան կազմութեան մէջ, եւ խնդրեցի իրենցմէ, որ դոնէ իրենց բարոյական աջակցութիւնը նուիրեն այդ խնդրին լուծման. որովհետեւ հակառակ այն սլաւոճառարանութեան թէ «Առաջնորդական խնդիրը եկեղեցական խնդիր մըն է եւ Միութեան հետ կապ չունի», Առաջնորդական խնդիրը, ոչ թէ իր եկեղեցական կամ հոգեւոր հանգամանքով, այլ ուղղակի իր վարչական հանգամանքով կապ ունէր եւ պիտի ունենար Հայ Ազգային Միութեան հետ, ինչ որ ու-

նեցած էր Ազգային Պաշտպանութեան Միութեան հետ, քանի որ Հայաստանեայց Եկեղեցին ներկայացուցիչներ ունի Միութեան մէջ, որոնք նշանակուած են Առաջնորդութեան այս ամէնէն վերին ժողովին կարգադրութեամբ:

Շիքակօէն եկայ Նիւ Եորք, ուր առիթ ունեցայ խորհրդակցելու առաջնորդական խնդրի մասին Երեսօխտաններէ ոմանց հետ (Մայիս 21 Բշ.), եւ տեղեկութիւններ ու բացատրութիւններ առնելէ ետքը Փետր. 18ի Երեսօխտանական ժողովին մէջ անցած դարձածին վրայ, յայտարարեցի թէ չեմ կրնար ընդունիլ Տեղապահութեան պաշտօնը, բայց կ'ուզեմ օգնել Երեսօխտ. ժողովին, որպէս զի անիշխանութեան չմատնուի Եկեղեցին, եւ այս մասին ալ կը մտածեմ եւ Պոստոն հասնելէ ետքը կուտամ վերջնական պատասխան:

Պոստոն հասնելէ ետքը, դարձեալ քննութիւններ կատարեցի, տեղեկութիւններ քաղեցի, ուսումնասիրեցի Երեսօխտ. ժողովոյ տուած որոշման օրինական պայմանները թէ՛ Ամերիկայի Հայոց Սահմանադրութեան եւ թէ՛ ժողովրդական ընդհանուր եւ ընկալեալ սովորութեանց հետ բաղդատելով զանոնք, եւ նոյն խիստ տեսակցեցայ բողոքող կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ, եւ վերջապէս Յունիս 12 Քշ. Դիւանիդ և Երեսօխտաններէ ոմանց ներկայութեամբ դարձեալ խօսելէ եւ խորհրդակցելէ ետքը, խղճի եւ կոշման պարտք համարեցի ընդունիլ Տեղապահութեան այս առժամանակեայ պաշտօնը:

Եւ Դիւանդ, իր Յունիս 12 թուակիր պաշտօնա-

գըրրով յայտարարեց Ամերիկայի Հայոց, թէ Գաղա-
տիոյ Առաջնորդ Բարդէն Եպս., Երեւի. Ժողովոյ իր
Փետր. 18ի նիստին մէջ տուած որոշման համեմատ՝
ընդունած է «այդ առժամանակեայ պաշտօնը :»

Ընկալեալ սովորութեան համեմատ ես ալ շրջա-
բերական մը հանեցի, Յունիս 15 թուակիր, ուղղեալ
Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան մէջ գտնուող
Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր ժողովուրդին եւ
պաշտօնական անձերուն եւ մարմիններուն եւ յայտա-
րարեցի, թէ Երեւի. Ժողովոյ որոշման համեմատ
խղճի եւ կոշման պարտք համարած եմ ընդունիլ «Տե-
ղապահութեան այս բոլորովին առժամանակեայ պաշ-
տօնը, որպէս զի կարգուկանոնը հաստատուի Եկե-
ղեցւոյ մէջ եւ Սահմանադրութիւնը, առանց խեղա-
թիւրուելու, ուղղութիւն տայ Առաջնորդարանի գոր-
ծերուն» :

Տեարք Երեւիտիսանք .

Ամերիկայի մէջ սկիզբէն ի վեր ես չուզեցի ըն-
դունիլ եկեղեցական ոեւէ պաշտօն, եւ ասիկա յայ-
տարարեցի ամէն անգամ, գրաւոր կամ բերանացի,
երբ առիթը ներկայացաւ :

Տեղապահութիւնն ալ պիտի չընդունէի, բայց
ընդունեցայ, որովհետեւ խիղճս ու կոշումս պարտա-
դրեցին ընդունիլ այդ, դարձեալ կը շեշտեմ, առժա-
մանակեայ պաշտօնը :

Եւ կ'ուզեմ բացատրել այս կէտը, որպէս զի ժո-
ղովդ ալ, որ զիս հրաւիրեց այս պաշտօնին, ուղղակի
եւ պաշտօնապէս հասկնայ, թէ ի՞նչ ըսել է խղճի եւ
կոշումի պարտք :

Մէջտեղ կայ Սահմանադրութիւն մը, եւ ես դիտած եմ որ Առաջնորդութեան հոգեւոր եւ վարչական գործերուն մէջ կնճիոններ եւ կամայականութիւններ կը բղխին ուղղակի այդ Սահմանադրութեան խեղաթիւրումէն, եւ ասիկա վնասած է Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյն:

Ժողովոյդ Փետր. 18 ի նիստէն ետքը, Արսէն Վրդ. ի կողմէն հրատարակուած վերոյիշեալ «Պաշտօնական Յայտարարութիւն»ը ամէնէն ուշադրաւ եւ կարկառուն փաստերէն մէկն էր խեղաթիւրումներուն: Դարձեալ՝ Կրօն. Ժողովոյն, յանուն Կեդր. Վարչութեան, ըրած կարգ մը պաշտօնական անկարգութիւնները, զոր օրինակ, Առաջնորդին հաշիւներուն քննութիւնը եւ ճշտութեան հաստատութիւնը, եւն. , զործ մը որ Տնտեսական Ժողովին կ'իյնայ ըստ Սահմանադրութեան, Առաջնորդին հրաժարական ընդունելու կամ մերժելու գործը, ինչպէս նաեւ իր ըրած «հրաւէրը Ամերիկահայ Երեսփ. Ժողովի գումարման», Յուլիս 4ին, թիւ 17—301 եւ Մայիս 18 թուակիր պաշտօնագրով, այն ալ նոր Երեսփոխաններ ընտրելու հրահանգով, երբ պաշտօնի վրայ գլուխուղ Երեսփոխանք դեռ չէին բոլորած իրենց սահմանադրական շրջանը, եւն. , եւն. , ասոնք նորագոյն եւ բոլորովին հակասահմանադրական գործեր էին պաշտօնապէս եւ հրապարակաւ եղած եւ կը ծառայէին իրաց վիճակը աւելի եւս կնճոտելու եւ անկարգապահութիւնը ծաւալելու:

Պէտք է դիտել, որ այս անկարգութեանց հեղինակ Կրօն. Ժողովը, սահմանադրապէս օրինաւոր ալ

չէր . որովհետեւ Կրօն . Ժողովը , ըստ Սահմանադրութեան , պաշտօն ունեցող եկեղեցականներէ պիտի կազմուէր : Իսկ այդ Կրօն . Ժողովի հինգ անդամներէն երկուքը , Տրխիոն եւ Տիրայր Վրդ . ներ անպաշտօն էին (1) . երրորդը , Տ . Մատթէոս Քհնյ . Մանիկեան , 1913ի Երեսփ . Ժողովին մէջ , ուր Արսէն Վրդ . Առաջնորդ ընտրուած է , միաձայն հաւանութեամբ դուրս ձգուած էր ընտրելեաց ցանկէն եւ հետեւաբար չէր կրնար անդամ ըլլալ Կրօն . Ժողովին , քանի որ Երեսփ . Ժողովոյ այդ որոշումը փոխուած կամ ետ առնուած չէր նոյն ինքն Երեսփ . Ժողովոյ կողմէն

(1) Տիրայր Վրդ . ինքն իսկ այնքան գիտակ էր իր անպաշտօն վիճակին , որ Փետր . 18ի Երեսփ . Ժողովին ալ չմասնակցեցաւ եւ այս պարագան պաշտօնապէս յայտնեց Երեսփ . Ժողովի Դիւանին ուղղեալ իր Փետր . 17 թուակիր գրութեամբ , որու պատճէնն է .

Մեծայարդ

Տիրար Ատենապետ Ազգ . Երեսփ . Ժողովոյ ,

Նկատելով որ ես Ուստրի առժամեայ եկեղց . պաշտօնեայն եմ եւ ոչ Առժ . հովիւ մը իսկ , կը յայտթէ պիտի չկրնամ իբր այդ՝ մասնակցիլ Երեսփոխանական Ժողովի այս նիստին , Փետր . 18 , Կիրակի օր :

Ողջունիւ

Մնամ Աղօթարար

Ստոր . (ՏԻՐԱՅՐ Ծ . Վ . ՄԱՐԳԱՐԵԱՆ)

(2) , չորրորդն ալ , Տ . Սերովբէ Քհնյ . Ներշապուհ , Առաջնորդին կարգադրութեամբ , փոխանակ Տիրայր Վրդ . ի , Ուէսթ Հօպօքըն դրկուած ժամանակաւոր պաշտօնեայ մըն էր տեղւոյն եկեղեցւոյն մէջ : Մի-

(2) Ահա՛ տրուած որոշման արձանագրութիւնը .

—«Ն . ԽԱՇՄԱՆԵԱՆ .—Այս ցանկին մէջ անուն մը կայ , որ պէտք չէ մտնէ ընտրութեան մէջ . ատիկա Տ . Մատթէոս Մանիկեանն է : Այդ մարդը ո՛չ միայն խռովութիւններու պատճառ տուած է , այլ եւ մատ ունեցած է Նիւ Եորքի խնդիրներուն մէջ , եւ բացարձակապէս ըմբոստ դիրք մը , եւ անվայել ոճ մը գործածած է Պատուիրակ Սրբազանին ուղղած նամակներուն մէջ : Ուստի ես կ'առաջարկեմ , որ անոր անունը ջնջուի ցանկէն :

«Ուէսթ Հօպօքընի եւ Ուստրի Երեսփոխաններուն կողմէն միեւնոյնը շեշտուեցաւ , ու յետոյ բացատրութիւն ուղղուելով Նախագահ Սրբազանէն , Նորին Գերապատուութիւնը հաստատեց իրողութիւնը , եւ Մատթէոս Քհնյ . Մանիկեանի կողմէ անպատշաճ լեզուով գրուած մէկ նամակը ժողովին ներկայացուց : Ասոր վրայ ժողովը միաձայնութեամբ ջնջեց Մատթէոս Քհնյ . Մանիկեանի անունը . ընտրելեաց ցանկէն , եւ կրօն . ժողովը կազմեց հետեւեալ կերպով ,» եւն . (Տե՛ս տպագրեալ արձանագրութիւնը «Դ . Գումարում»ին , էջ 17 , որ տեղի ունեցաւ Կաթողիկոսին Լիազօր Պատուիրակ Գեր . Գէորգ Արքայս . Իւթիւճեանի նախագահութեամբ) :

այն օրինաւոր անդամ կը մնար Փրավիտէնսի հովիւը,
Վաղարշակ Վրդ. :

Կրօն . Ժողովը անշուշտ դիտէր իր ապօրէն կաղ-
մը եւ դիտնալով հանդերձ առ ոչինչ կը համարէր
Սահմանադրութիւնը թէ՛ իր կազմութեան եւ թէ՛
իր դործառնութեանց հանդէպ , եւ այսպէս կը բաղ-
մացնէր իր սխալները , նոյն իսկ Արսէն Վրդ . ի հրա-
ժարեցուելէն ետքը եւ անոր հսկողութեամբ ու թե-
լադրութեամբ :

Արդ՝ ոեւէ խղճամիտ եւ այս բոլոր անկարգու-
թեանց տեղեակ Եկեղեցական , իրեն համար խղճի եւ
կոչումի պարտք պիտի համարէր ընդունիլ իրեն ե-
ղած օրինաւոր առաջարկ մը Երեսփոխանական Ժո-
ղովոյ կողմէն եւ պիտի աշխատէր Սահմանադրու-
թիւնը դործադրելու :

Իսկ ես , իմ եպիսկոպոսական աստիճանին եւ
պարտաւորութեան բերմունքով , աւելի եւս պարտա-
ւոր էի թոյլ չտալ աւելի խոնարհ աստիճանի պաշ-
տօնեաներուն , որ յանուն Եկեղեցւոյ եւ Սահմանա-
դրութեան ապօրէն եւ անկարգ դործեր ընէին : Այն-
պէս որ՝ եթէ նոյն իսկ պաշտօնական մարմին մը ,
ինչպէս է Երեսփոխանական Ժողովը , չըլլար այս ծա-
ռայութիւնն ինձմէ խնդրողը , ինչպէս ըսի , ոեւէ խղ-
ճամիտ եւ կատարուած խայտառակութեանց իրազեկ
եպիսկոպոս մը , պարտաւոր էր ինքնին կոչում ընել
Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակնե-
րուն , եւ արտաքոյ կարգի միջոցներով վերջ տալ ա-
տոնց : Որովհետեւ , Տեարք Երեսփոխանք , ինչպէս որ
դիտէք՝ Սահմանադրութենէն եւ կամ ոեւէ օրէնքէ

վեր եւ օրէնքի մը տառէն բարձր արդարութիւն մը կայ, արդարութիւն մը կայ (Equity), որ կը լուծէ ամէն կնճիռ ինչպէս քաղաքային գործառնութեանց, եւս առաւել Եկեղեցւոյ նման հոգեւոր հաստատութեան մը մէջ:

Այս է պատճառը, որ խղնի եւ կոչման պարտք համարած եմ ըսի, ընդունիլ Տեղապահութեան պէս առժամանակեայ պաշտօն մը. այսինքն, ըստ Սահմանադրութեան, առ առաւելն մէկ տարուան պաշտօն մը, եւ ես առաջադրած էի շատ կարճ միջոցի մը մէջ լրացնել այդ պաշտօնին պարտաւորութիւնները եւ քաշուիլ:

Անոնք որ շատ մօտէն տեղեակ են իմ առողջական վիճակիս, եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ համար այս վարչական ձեւակերպութիւններէ աւելի սիրելի եւ աւելի արժէքաւոր զբաղումներուս եւ ծրագիրներուս, ինձ հետ կը վկայեն՝ թէ այս պաշտօնը բացարձակապէս մաքուր ծառայութեան ոգևով, գոհողութեամբ մը ընդունեցի:

Իսկ պաշտօնիս առաջին գործը համարեցի Փետր. 18ի Ժողովին մէջ տարածայն եղող Երեսփոխանները, նոր ժողովի մը մէջ, տարածայն չեղողներուն հետ քով քովի բերել, ընծայել անոնց ամէն դիւրութիւն, որպէս զի սիրով եւ խաղաղութեամբ խօսին իրարու հետ, հասկնան զիրար եւ վերջ տան խնդրին:

Եւ այս գետինը պատրաստելու համար այնքան սիրով, խնամքով եւ Հայց. Եկեղեցւոյ Ժողովուրդին աւանդական զգացումներուն եւ ներշնչումներուն վստահելով գրեցի եւ հրատարակեցի առաջին ՇՐՐ-

ջաբերականս, եւ ետքն ալ ի նիստ հրաւիրեցի Երեսփոխանութիւնը :

Ասկէ զատ Հոգարարձութիւնները, Հոգեւոր Հովիւները կանոնաւոր յարաբերութեամբ Առաջնորդութեան հետ գործակցութեան բերելու, քիչ մը ետանդ եւ հետաքրքրութիւն արթնցնելու, եւ Հայց Եկեղեցւոյն հոգեւոր նշանակութիւնը՝ անոր վարչական կանոնաւորութեան հետ միանգամայն արտայայտելու համար, հրատարակեցի երկրորդ Շըրջաբերական մը, եւ այդ միջոցին մասնաւորապէս շահեկան թղթակցութիւններ ունեցայ Նիւ Եորքի, Ուէսթ Հոպօքընի, Թրոյի Պատ. Հոգարարձութեանց հետ, որոնք կ'ուղէին չէզոք կամ ձեռնպահ մնալ եւ չղրկել իրենց թեմին Երեսփոխանները այսօրուան Ժողովին, որպէս զի զերծ ամէն տեսակ նախապաշարումէ, կիրքէ, գործակցին ինձ, եւ դիւրացնեն իմ այս կարճ պաշտօնիս աշխատութիւնները :

Բայ աստի՛ ամէն կողմէ բերանացի եւ գրաւոր քաջալերութիւններ ընդունեցայ, որոնք ցոյց կուտային թէ Ամերիկայի դժբախտ Հայաստանեայց Եկեղեցւոյն Ժողովուրդը փափաք ունի արթննալու, կարգի կանոնի մէջ տեսնելու իրենց մայրենի Եկեղեցին :

Բայց շատ ցաւալի է, որ իմ պարզութիւնս եւ անկեղծութիւնս փոխարինուեցաւ Փետր. 18ի նիստին մէջ տրուած որոշումը չյարգողներու կողմէն յայտնի եւ գաղտնի դիտումներով եւ այսպիսիներ աններելի մեղքեր գործեցին այնպիսի հրատարակութիւններով, որոնք հակառակ էին իրողութեան, հակառակ

ճշմարտութեան, հակառակ՝ դոյացած Հայ Ազգային Միութեան ոգւոյն, հակառակ՝ նոյն իսկ տարրական կենցաղագիտութեան եւ խիստ՝ բայց ազնիւ քննադատութեան մը պայմաններուն ու կերպերուն :

Ու երբ այստեղ կ'ակնարկեմ այդ սիրոյ եւ խաղաղութեան հակառակ արտայայտութիւններուն եւ անողոք կերպով կը դատապարտեմ դանոնք, ասիկա արդիւնքը չէ իմ անձիս դէմ եղած անիրաւութեանց, վատահ եղիք, թէ ո՛չ. ես չեմ դառնացած եւ ոչ մէկուն, միայն մտահոգ եմ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյն համար, որ այսպիսի հոյակապ Հանրապետութեան մը հովանւոյն տակ եւ այսպիսի կրօնական երկրի մը մէջ ինկած եւ իջած է խեղճ վիճակի մը, դուրկ հոգեւոր ոյժէ եւ արտայայտութենէ, եւ նշաւակ եղած է չքոտի նկատումներու՝ օրէնքի, Սահմանադրութեան անունով, եւ մարդիկ կան, որ առանց խտիր դնելու խօսքի եւ միջոցներու մէջ, կը կոխտան ամէն նուիրականութիւն, եւ իրենց կուսակցական շահերուն դիմակ ընելով ազգասիրութիւնը, օրէնքի նախանձախնդրութիւնը, կը քաջալերեն այս վիճակը, կը ջանան խարել ու խարբալել ժողովուրդը, եւ պատճառ կ'ըլլան, որ շարունակէ այդ վատթար կացութիւնը : Ընդհակառակն, մինչեւ հիմայ, այս երկրին մէջ համբուող բիւրաւոր եկեղեցիներուն ամէնէն փառաւորը պարտ էր ըլլալ եւ կրնար ըլլալ Հայաստանի Եկեղեցին :

Խորունկ ցաւերով կը յայտարարեմ, թէ այդ քաջալերուած վատթար վիճակին հետեւանքն է, որ այսօր Երեսփոխաններէն ոմանք, թերեւս հակառակ

իրենց կամքին, արդիւրուեցան այսօր դալ այս ժողովին (1) :

Այսօր Պատ. ժողովոյդ վրայ կը ծանրանայ նուիրական պարտք մը. եւ այդ պարտքը սա՛ է. — Հողեւորութեամբ, կրօնական երկիւղածութեամբ պէտք է նայիլ Առաջնորդութեան վրայ, եւ ըստ այնմ կարգադրել անոր Վարչական գործերը : Առաջնորդութիւնը, ո՛չ բնաշխարհի մէջ, ո՛չ ալ Ամերիկայի մէջ, գուտ վարչական գործերու եւ ձեւակերպութիւններու մեքենականութիւն մը չէ, եւ անոր համար խորհողներու գործողներ այս կէտը պէտք չեն վրիպեցնել աչքէ : Եւ կը յուսամ թէ դուք, Տեարք Երեսփոխանք, այդ ոգւով եւ դիտակցութեամբ պիտի կատարէք ձեր պարտքը :

Որչափ շատակ պիտի ըլլար, եթէ Եկեղեցւոյն հողեւորութեան չհաւատացողներ չխառնուէին անոր վարչական գործերուն ալ : Ասիկա ոչ միայն ծափահարելի պարկեշտութիւն մը պիտի ըլլար այնպիսի-

(1) Վերջին պահուն Ազգ թերթի երէկուան (Յուլիս 28, Շբ.) թիւին մէջ, որ լոյս կը տեսնէ նախորդօրէն, հրատարակեցի «Կոչ եւ Խնդիրք» խորագրին տակ յայտարարութիւն մը, եւ բացատրեցի, թէ ա՛յն Եկեղեցական եւ աշխարհական Երեսփոխանք, որ իրենց պաշտօնին ու խղճին ազատութիւնը կ'ենթարկեն Հողարարձութեանց ազդեցութեան, ո՛րչափ կը մեղանչեն օրէնքի դէմ, եւ խնդրեցի, որ յարգեն Եկեղեցւոյ բարոյական ոյժը, դան այսօրուան ժողովին եւ պատասխանատու չմնան :

ներուն համար , այլ նաեւ ասիկա պէտք է ըլլար առաջին բարեկարգութիւնը Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյն մէջ :

Սուքս վերջացնելու ատեն՝ անգամ մըն ալ կը յայտարարեմ , թէ Ժողովոյդ կողմէն ինձ առաջարկուած Տեղապահութեան առժամանակեայ պաշտօնը ստանձնեցի խղճի եւ կոշուճի պարտք մը կատարելու , այսինքն՝ օգնելու Երեսփոխանական Ժողովին , որ կարող ըլլայ Սահմանադրութեան համեմատ ուղղութիւն տալ Առաջնորդութեան գործերուն :

Ժողովդ իր սահմանադրական իրաւունքին մէջ է այսօր :

Երանի՛ թէ առարկութիւն կամ բողոք ունեցող Երեսփոխաններ , իրենց պաշտօնին ազատութիւնը զգալով , գերծ ամէն արտաքին ազդեցութենէ եւ կաշկանդումէ , այս պահուս հոս ըլլային : Ինչպէս որ դիտել տուի անգամ մը , ամէն կողմէ , բացի անկարգապահութիւն սիրողներէ , ընդունեցի գնահատութիւն , քաջալերութիւն , եւ ասիկա կ'ապացուցանէ , թէ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներուն գրեթէ ամբողջութիւնը համաձայն է Ժողովիդ կարգադրութեանց : Հետեւաբար , Տեարք Երեսփոխանք , ջերմապէս պիտի խնդրեմ ձեզմէ , որ առանց ժամավաճառ ըլլալու կրկնուած եւ աւելորդ վիճարանութիւններով , արագ արագ գործէք , լուծէք օրակարգի խնդիրները , օժտէք Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը կարող կեդր . Վարչութեամբ մը , եւ անոր յանձնէք , ըստ Սահմանադրութեան , նոր Տեղապահ մը նշանակելու գործը , եւ ընդունիք իմ հրաժարա-

կանս այն պաշտօնէն, զոր կարճ ժամանակի մը համար վստահած էիք ինձի, եւ ես ջանացի, տուեալ պայմաններու մէջ, խղճիս եւ կոչումիս պահանջներուն համեմատ գործադրել պաշտօնս :

Ասիկա է ուղիղ քայլը, զոր սխալի առնէ ժողովը : Հին վարչութիւնը դոյութիւն չունի, Կրօնական ժողովին ապօրէն կազմութեան եւ Տնտեսական ժողովին մեծամասնութեան հրաժարման հետեւանքով : Արդ, Նոր Կեդր. ժողովին կազմութեամբ՝ անիշխանական կացութիւնը վերջ կը դնէ, եւ Կեդր. վարչութիւն եւ իր ընտրելիք Տեղապահը՝ կարող են Սահմանադրութեան ժողովոյդ սահմանադրական հրահանգներուն համաձայն վարել Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան գործերը :

Աստուծոյ օրհնութիւնը եւ շնորհքը մաղթելով ձեզի՝ ձեր ժողովոյն սկիզբը, կը վերջացնեմ խօսքս :

ԲԱՆԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1917, Յուլիս 29

Ուստր

ՊԱՏՃԵՆ

Այն Տեղեկագրին, որ Երեսփոխանական Ժողովոյ Դիւանին կողմէն դրկուեցաւ Ամենայն Հայոց Սկաթողիկոսին, 1917 Օգոստոս 25 թուականաւ, նոյն Ժողովոյ (1917 Յուլիս 29) որոշման համաձայն, Առաջնորդութեան վերաբերեալ գործառնութեանց մասին:

Պէտք է դիտել, որ Տեղապահ Բարգէն Սրբազան, իր կողմէն, առանձինն, ոեւէ տեղեկագիր չէ ներկայացուցած Ն. Ս. Օծութեան Առաջնորդական խնդիրներու մասին, եւ բաւականացած է ստորագրելով սոյն Տեղեկագիրը:

Վեհափառ Տէր.

Երեսփ. Ժողովոյ իր Փետր. 19 թուականաւ հեռագրով եւ ապա Մարտ 10 թուականաւ դրութեամբ Ձեր Ս. Օծութեան մատուցած էր իր Փետր 18ի Նիստին տեղեկագիրը, որ 2 ձեռնպահի դէմ 27 քուէներու մեծամասնութեամբ Ամերիկայի Հայոց Առաջնորդական պաշտօնէն հրաժարեցուցած էր Գեր. Տ. Արսէն Վրդ. Վեհունին, իրեն դէմ յայտնուած դրաւոր և բերանացի դանդառները լսելէ եւ խնդիրը դարձեալ քուէից մեծամասնութեամբ օրակարգ անցնելէ յետոյ, եւ հետեւեալ բանաձեւով.

Նկատելով որ Արսէն Վրդ. Վեհունի իր պաշտօնավարութեան միջոցին Սահմանադրութեան սկզբ

բունքներուն եւ տրամադրութեանց հակառակ, ինքնազլուխ եւ կամայական տնօրինութիւններ ըրած է, հաշիւ եւ տեղեկագիր ներկայացնելէ խուսափած է, նոյն իսկ անտես ըրած է Երեւի. Ժողովին կողմէ տրուած որոշումներն եւ յանձնարարութիւնները,

Նկատելով որ իր պաշտօնական յարաբերութեանց մէջ վարուելակերպէ զուրկ դռնուած է,

Նկատելով որ եկեղեցական պաշտօնէութեան մէջ տեսնուած անկարգութիւններու եւ դայթակղական արարքներու նկատմամբ անտարբեր մնացած է,

Նկատելով որ Ամերիկայի կրօնական եւ ազգային պաշտօնական շրջանակներու մէջ իրեն նկատմամբ յարգանք եւ համակրանք կը պակսի, ինչ որ անկարելի կ'ընէ իր գործակցութիւնը վարչական մարմիններու հետ:

1—Կ'որոշէ Ամերիկահայ Սահմանադրութեան 30րդ յօդուածին մէջ տրուած իրաւասութեան համեմատ Առաջնորդական պաշտօնէ հրաժարեցնել Գեր. Տ. Արսէն Ծ. Վ. Վեհունին եւ այս որոշումը իրեն հաղորդել Դիւանին միջոցաւ:

2—Կ'որոշէ այս որոշումը հաղորդել Կեդր. Վարչութեան, պահանջելով որ Տեղապահ մը ընտրէ. իսկ եթէ Կեդր. Վարչութիւնը թուականէս մինչեւ երկու շաբաթ նիստ դումարելով այս որոշումը չգործադրէ՝ այն ատեն Երեւի. Ժողովոյ Դիւանին կողմէ հրաւերուողը Ֆրէզնոյի հովիւ Գեր. Տ. Վարդան Ծ. Վ. Գասպարեանի զինք հրաւիրելով ի տեղապահութիւն: Եւ եթէ Տ. Վարդան Ծ. Վ. այս պաշտօնը վերջնական-

նապէս մերժէ, այն ատեն միեւնոյն հրաւէրը ուղղել
Գեր . Բարգէն Եպս . Կիւլէսէրեանի :

Յ—Կ'որոշէ այս իրողութիւնները անմիջապէս
հաղորդել Վեհ . Հայրապետին Ամենայն Հայոց :

Փետր . 18ի Երեւաի . Ժողովէն յետոյ Կեդր . Վար-
չութիւնը ոչ միայն չկրցաւ գործադրել Երեւաի . Ժո-
ղովոյս որոշումը, այլ եւ ոչ իսկ նիստ կրցաւ դումա-
րել Կրօն . Ժողովոյ իրապէս կազմալուծուած եւ Տըն-
տեսական Սորհրդոյ անդամներուն մեծամասնու-
թեամբ հրաժարած ըլլալուն պատճառաւ, որով ժո-
ղովոյս կանխաւ տուած որոշման համաձայն, Երեւաի .
Ժողովոյ Դիւանը Տեղապահութեան պաշտօնին հրա-
ւիրեց Փրէզնոյի հովիւ Գեր . Տ . Վարդան Ծ . Վ .
Գասպարեանը, որուն կողմէ եղած վերջնական մեր-
ժումին վրայ, դիմեց Գեր . Տ . Բարգէն Եպս . Կիւլէ-
սէրեանի, որ նոյն պահուն Քալիֆօրնիա կը գտնուէր
եւ պատասխանեց թէ վերադարձին կացութեան մօ-
տէն իրազեկ ըլլալէ յետոյ պիտի տայ իր պատաս-
խանը :

Այս պահուն Ամերիկայի Հայոց Եկեղեցւոյն հա-
մար ստեղծուած էր յոյժ աննախանձելի վիճակ մը :
Տ . Արսէն Վրդ . Վեհունի, որ չէր ուզած ճանչնալ եւ
համակերպիլ Երեւաի . Ժողովոյս իր մասին տուած
որոշման, տեսնելով որ թեմերն եւ ժողովուրդը բա-
ղարձակ մեծամասնութեամբ համամիտ են այդ որոշ-
ման եւ բարեպատեհ իրողութիւն մը կը նկատեն իր
հրաժարեցումը, ստիպուեցաւ գործնականապէս թո-
ղուլ իր պաշտօնը, առարկելով թէ ինք հրաժարական

մատուցած է Ձեր Վեհափառութեան, եւ Տ. Տիրայր
 ու Տ. Տրխփոն երկու վարդապետներով աղա-
 րակ մը գնեց եւ հոն քաշուելով սկսաւ անձնական
 գործով եւ առեւտուրով զբաղիլ, թէեւ իր երկու ան-
 պաշտօն եւ շահակից վարդապետներով կրօնական
 ժողով ձեւացնելով զանազան միջոցներով եւ շրջա-
 բերականներով չղաղբեցաւ երբեք Եկեղեցւոյս խա-
 ղաղութիւնը վրդովելու նպատակաւ փորձեր ընելէ :
 Միւս կողմէ Փետր . 18ի Երեւփ . ժողովը կեդր . Վար-
 չութեան հրաժարական եւ խնդիր չունենալով իր
 սեղանին վրայ, չէր կրցած նոր Վարչութիւն ընտրել՝
 մինչդեռ կեդր . Վարչութիւնը արդէն իսկ դադրած
 էր գոյութիւն ունենալէ . եւ այս կերպով Եկեղեցին
 եւ Առաջնորդութիւնը մատնուած էր բոլորովին ան-
 տէր եւ անկերպարան կացութեան մը եւ անիշխանու-
 թիւնն ու անկարգութիւնները սկսած էին ցաւալի ե-
 բեւոյթներու եւ իրողութիւններու պատճառ ըլլալ :

Երբ Գեր . Տ . Բարգէն Սրբազան Քալիֆօրնիայէն
 վերադարձաւ, Երեւփ . ժողովոյս Դիւանը դիմում ը-
 նելով Ն . Սրբազնութեան, պարզեց այս կացութիւնն,
 եւ խնդրեց չմերժել Տեղապահութեան պաշտօնը .
 միեւնոյն խնդիրքն ըրած էին թէ Նիւ Եորք եւ թէ
 Պոստոն ազգային երեսփոխաններ եւ ուրիշ անձնաւո-
 րութիւններ : Գեր . Տ . Բարգէն Սրբազան յայտարարեց
 թէ ինք սկիզբէն ի վեր ոեւէ պաշտօնի հետամուտ
 չէր եղած Ամերիկայի մէջ, բայց իբրեւ Հայց . Եկե-
 ղեցւոյ Եպիսկոպոս մը չկրնար անտարբեր մնալ իրաց
 այս վիճակին եւ Եկեղեցին ու Առաջնորդարանը այս
 ամօթալի եւ անել վիճակէն դուրս հանելու համար

խղճի և կոչումի պարտք կ'զգայ ստանձնել Տեղապա-
 հութեան բոլորովին առժամանակեայ պաշտօնն և
 Երեսփի . Ժողով գումարելով կանոնաւոր ընթացք մը
 տալ գործերուն : Այս իրողութիւնն օրին հեռագրաւ
 հաղորդուեցաւ Ձեր Ս . Օծութեան թէ Երեսփի . Ժո-
 ղովոյս Դիւանին և թէ՛ Ն . Սրբապետութեան կողմէ : Գեր .
 Տ . Բարգէն Սրբազան տեղապահական պաշտօնի ձեռ-
 նարկելով եկեղեցւոյ մէջ անիշխանութեան և ան-
 կարգութեանց վերջ դնելու նպատակաւ հրատարակեց
 երկու շրջաբերականներ , որոնց օրինակները ներփակ
 կը մատուցանենք . յետոյ բոլոր երեսփոխանները քով
 քովի բերելու և եթէ դժգոհութիւններ ու թիւրիմա-
 ցութիւններ կան հարթելու , ինչպէս նաեւ Կեդր .
 Վարչութիւն մը կազմել տալով , ըստ օրինի Տեղապա-
 հի ընտրութիւն կատարելու նպատակաւ , Յուլիս 29
 Կիրակի օրուան համար , Ուստր նիստի հրաւիրեց
 Երեսփի . Ժողովս : Ժողովս գումարուեցաւ որոշեալ
 օրը , 52 երեսփոխաններէն 34ին ներկայութեամբ և
 ըստ օրինի իր դիւանը կազմելով գործի ձեռնարկեց
 և մի առ մի լուծեց իր օրակարգին վրայ գտնուած
 խնդիրները . ընտրեց Կեդր . Վարչութիւն մը , նա-
 խորդին շրջանը լրացնելու և նոր Երեսփոխաններ
 ընտրել տալով Երեսփի . նոր ժողով մը գումարելու
 համար : Երեսփի . Ժողովոյ բացման առթիւ Տեղապահ
 Գեր . Տ . Բարգէն Սրբազան կարգաց բացման ճառ
 մը՝ որու մէջ պարզելէ յետոյ թէ ինք ի՞նչ պարագա-
 ներու տակ խղճի և կոչումի պարտք նկատած էր ըն-
 դունիլ Տեղապահութեան պաշտօնը , յայտարարեց թէ
 ներկայ Երեսփի . Ժողովոյ գումարումով և Կեդր .

Վարչութեան ընտրութեամբ իր գործը աւարտած պէտք է համարուի եւ նորընտիր կեդր. Վարչութիւնը պէտք է ընտրէ Տեղապահ մը Ամերիկայի Հայոց Առաջնորդական գործերը վարելու համար: Ժողովը Տեղապահական խնդրոյն կարգադրութիւնը յանձնեց նորընտիր կեդր. Վարչութեան եւ միեւնոյն ժամանակ խնդրեց Ն. Սրբազնութենէն շարունակել իր պաշտօնը մինչեւ այդ կարգադրութիւնը:

Երեսփ. Ժողովոյ ամբողջ տեղեկագիրը, ինչպէս նաեւ Տեղապահ Սրբազանին ճառը նմանապէս ներփակ կը մատուցուին այս գրութեամբ:

Պէտք կը տեսնենք մասնաւոր կերպով յիշել թէ Երեսփ. Ժողովոյ Նստին ներկայ էին Ամերիկայի Հայոց. Եկեղեցւոյ 17 Թեմերէն 14ին ներկայացուցիչները: Երեսփոխաններէն ոմանց բացակայութիւնը, ինչպէս կը տեսնուի ներփակ Տեղեկագրէն, տեղւոյ հեռաւորութեան եւ այլ պատահական պատճառներու հետեւանք էր, և միայն տասնը երեք (13) Երեսփոխաններ, իբր դժգոհ, չէին ուզած մասնակցիլ, եւ կ'իմանանք թէ առարկութիւններ կ'ընեն Երեսփոխանական Ժողովոյս տուած որոշումներուն եւ ըրած կարգադրութեանց դէմ: Ասոնց գլխաւորն է Նիւ Եորքի հովիւը՝ Տ. Մատթէոս Քհնյ. Մանիկեան, եւ երեսփոխանները: Տ. Մատթէոս Քհնյ. արդէն իր ըմբոստ եւ անկարգ ընթացքով ասկէ առաջ ալ միշտ խնդիրներու տեղի տուած է, եւ Ձեր Վեհափառութիւնը նախորդ Առաջնորդին յատուկ հրահանգ տուած էր հեռացնել զինք Ամերիկայէն. հրահանգ որ մեզի անձանօթ պատճառներով չգործադրուեցաւ, եւ յիշ-

Ետլ քահանան մնաց միշտ քար դայթակղութեան Ամերիկայի Հայց . Եկեղեցւոյն մէջ : Բացի Նիւ Եորքէն Բրավիտէնսի եւ Ուէսթ Հոլոքընի թեմերն են միայն , որոնց երեսփոխանները գրեթէ կէս առ կէս անհամաձայն կը գտնուին Երեսփ . Ժողովոյս , թէ ներկայ եւ թէ ամբողջ երեսփոխաններու թիւը նկատի ունենալով , մեծամասնութեամբ տուած որոշումներուն հետ :

Թէեւ ազարակ մը քաշուած եւ անձնական առեւտուրով գրադած , նախկին Առաջնորդ Տ . Արսէն Վրդ . Վեհունի եւս կը փորձէ շարունակ վէճ եւ պառակտում յառաջ բերել եւ վրդովել Եկեղեցւոյ խաղաղութիւնը : Կը մերժէ յանձնել Առաջնորդարանի գոյքն եւ դիւանական թուղթերը ազգային օրինաւոր իշխանութեանց : Տ . Արսէն Վրդ . Վեհունի յայտնի երկպառակութիւն գրգռելու նպատակաւ ուղեց նաեւ առանձին Երեսփ . Ժողով գումարել Յուլիս Աին եւ հրրաւէր ուղղեց թեմերը : Այս ձեռնարկը բարեբախտաբար ձախողեցաւ , թեմերը լռութեամբ պատասխանեցին . որովհետեւ նոյն իսկ վերեւ յիշուած մի քանի թեմերու սակաւաթիւ երեսփոխանները ժողովի չեկան , հասկնալով որ աննշան փոքրամասնութիւն մը միայն պիտի կազմեն : Այս մէկ պարագան ինքնին կը բաւէ ցոյց տալ Ամերիկայի Հայց . Եկեղեցւոյ ժողովրդեան ձայնն ու կամքը , եւ Տ . Արսէն Վրդ . քաջ զգալով ասիկա , այժմ կը ջանայ չարաչար շահագործել Հայոց Հայրապետութեան անունն ու հեղինակութիւնը , այլեւայլ միջոցներով ժողովուրդին մէջ տարածայնելով թէ Ն . Վեհափառութիւնը կարեւորու-

թիւն չընծայեր Երեւի . Ժողովոյ որոշումներուն , եւ
 թեւ ու թիկունք կը կանգնի իրեն , եւ մենք ցաւով կը
 դիտենք որ գոնէ մեր տեղեկագիրներուն եւ հեռա-
 գիրներուն ստացուած ըլլալը չճանուցուիր մեզի ,
 թերեւս հեռաւորութեան եւ թղթատարական յարա-
 րերութեանց պատերազմի առթիւ յայտնի անկանո-
 նութեան պատճառաւ :

Ձեր Ս . Օծութեան լաւ ծանօթ է որ Գաֆթանեան նա
 խորդ Վարդապետն ալ յաջողեցաւ երկու տարի խոռ-
 վութեանց ասպարէզ դարձնել եւ տաղնապեցնել Ա-
 մերիկայի Հայոց Եկեղեցին , մէկ կողմէն դոյութիւն
 չունեցող խնդիրներ յուղելով և ներկայացնելով Հայ-
 րապետարանիդ , իսկ միւս կողմէն հոս օգտուելով ի-
 րեն դէմ ուղղուած բողոքներու մասին Մայր Աթոռոյ
 պահած լռութենէն , մինչեւ որ Ձեր Ս . Օծութիւնն
 հարկ տեսաւ Եւրոպայի Հայոց Առաջնորդ Գեր . Տ .
 Գէորդ Արքեպս . Իւթիւճեանը իբր լիազօր պատուիրակ
 Ամերիկա դրկել եւ յետոյ ալ պատշաճ դատեց կար-
 դազուրկ հռչակել զԳաֆթանեան եւ իսպառ վտարել
 Հայ եկեղեցականութեան շարքերէն : Գաֆթանեան
 նախկին Վարդապետի այդ ժամանակուան արարքնե-
 րէն եւ Հայրապետական Գիւղանի լռութենէն չարա-
 չար տուժեց Ամերիկայի Հայոց . Եկեղեցին եւ այդ
 առթիւ ստեղծուած անկերպարան եւ ողբալի կացու-
 թեան հետեւանքներն զգալի են մինչեւ այսօր : Մենք
 կը տեսնենք որ այժմ ալ նման պարագաներու եւ ի-
 րողութիւններու հանդէպ կը գտնուինք եւ կը ցաւինք
 որ դարձեալ Ձեր Վեհափառութեան հեռաւորութեան
 եւ այլեւայլ պատճառներով լռութիւնը քաջալեր եւ

զօրավիզն կը հանդիսանայ անոնց , որոնք Սահմանադրութեան բացորոշ տրամադրութիւնները անտես ընելով եւ խեղաթիւրելով , իրենց անխոստովանելի հաշիւներուն եւ նկատումներուն կ'ուզեն ծառայեցնել Ամերիկայի Հայոց Եկեղեցին : Սոնարհարար կը խընդրենք որ Ձեր վեհափառութիւնը հաճի նկատի ունենալ Ամերիկայի Հայոց Սահմանադրութիւնն եւ ամփիջապէս լսելի ընէ իր Հայրապետական հեղինակաւոր ձայնը , յարգել տալու համար անոր բացորոշ տրամադրութիւններն եւ այդ բացորոշ տրամադրութեանց համեմատ Երեւոյի . Ժողովոյս ունեցած իրաւունքներն եւ տուած որոշումները :

Մատչելով ի համբոյր Ձերդ Հայրապետական
Ս . Աջոյն

Մնամք խորին ակնածանօք

Ի դիմաց Երեւոյի . Ժողովոյ Ամերիկայի Հայոց

Ատենադպիր

Ատենապետ

Մ . Գ . ՊԷՐՊԷՐԵԱՆ

Մ . Տ . ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

յըստուգութիւն եւ ի հաստատութիւն ստորագրութեանցս

Կ'ստորագրեմ

Վասն Տեղապահի

1917 , Օգոստոս 25

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ուստր

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Գ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
1918, ԱՊՐԻԼ, 7-8
ՈՒՍՏՐ, ՄԷՍ.

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Գ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ^{*)}

1918 ԱՊՐԻԼ 7-8

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

ԲԱՅՈՒՄ, ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻԻԱՆԻ

Ամերիկայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երեւի. Ժողովոյ նոր շրջանի Ա. նիստը տեղի ունեցաւ 1918 Ապրիլ 7, Կիրակի, Ուստր Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովասրահին մէջ, ժամը 10.30ին, նախադահութեամբ Առաջն. Տեղապահ Գեր. Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեանի :

Ժողովը բացաւ Կեդրոնական Վարչութեան Ատենադպիր՝ Պր. Մաղաք Գ. Պէրպէրեան : Ժողովին ներկայ էին 34 երեսփոխաններ, ընտրուած հետեւեալ թեմերէն .

(*) Արձանագրութեանս երկրորդ տպագրութիւնն է այս : Առաջին տպագրութիւնը եղած է 1918ին, ԱԶԳԻ տպարանին մէջ եւ սպառած է :

Ա. ՈՒՍՏՐԻ ԹԵՄԷՆ

1. Տ. Եղիշէ Քհնյ. Գալչընճեան
2. Առաքել Գ. Եաղըճեան
3. Կարապետ Պ. Թովմաճանեան
4. Մկրտիչ Քէլէշեան
5. Սարգիս Ռստիկեան

Բ. ՊՈՍՏՈՆԻ ԹԵՄԷՆ

6. Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
7. Աւետիս Սելեան
8. Տոքթ. Կ. Գ. Գալուստեան
9. Սարգիս Նահիկեան

Գ. ՆԻԻ ԵՈՐՔԻ ԹԵՄԷՆ

10. Գէորգ Սարաֆեան
11. Թադևոր Քիւփէլեան
12. Խաչատուր Յ. Մեսրոպեան
13. Ղազարոս Պոյաճեան
14. Մարիոս Մօրուքեան

Դ. ԼՕՎԷԼ—ԼՕՐԷՆՍԻ ԹԵՄԷՆ

15. Տ. Դաւիթ Քհնյ. Տ. Աւետիսեան
16. Մկրտիչ Գ. Քէլէշեան
17. Յովհաննէս Փասլուճեան

Ե. ՔԱՆԱԹԻՔԻԹԻ ԹԵՄԷՆ

18. Գարեգին Գէորգեան

Զ. ՌԻՉՄԸՆՏԻ ԹԵՄԷՆ

19. Մարգար Յովհաննէսեան

Է. ՖՐԷՉՆՈՅԻ ԹԵՄԷՆ

20. Տ. Բարդէն Եպս. Կիւլէսէրեան

21. Վահան Քիւրքճեան

22. Մաղաք Գ. Պէրպէրեան

Ը. ՖԱՈՒԼԸՐԻ ԹԵՄԷՆ

23. Կարապետ Մուշեղեան

24. Մարտիրոս Տիրանեան

Թ. ԼՕՍ ԱՆՃԷԼՕՍԻ ԹԵՄԷՆ

25. Արմենակ Ն. Նաղարէթեան

26. Հրաչ Երուանդ

Ժ. ՖԻԼԱՏԷԼՖԻՈՅ ԹԵՄԷՆ

27. Արամ Ճէրահեան

28. Նաղարէթ Կիւմիւշկէրտանեան

29. Պապա Խալընեան

ԺԱ. ՇԻՔԱԿՈՅԻ ԹԵՄԷՆ

30. Մարկոս Տ. Մանուէլեան

31. Աւետիս Տէրոյենց

32. Գէորգ Թովմաճանեան

33. Տիգրան Էքմէքճեան

ԺԲ. ՔԼԻՎԼԷՆՏԻ ԹԵՄԷՆ

34. Կարապետ Փափազեան

Թեմական Ժողովներէ ընտրուած եւ Առաջնորդարան տեղեկագրուած վեց երեսփոխանները Ժողովէն բացակայ դանուեցան վերջին պահուն զանազան բանաւոր պատճառներով :

Բացման աղօթքն արտասանեց Տեղապահ Գեր. Տ. Շահէ Մ. Վ. Գասպարեան, եւ երեսփոխաններու ինքնութիւնը ստուգելէ յետոյ ձեռնարկուեցաւ Երեսփ. Ժողովի դիւանին ընտրութեան : Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան, Տիարք՝

Մարկոս Տ. Մանուէլեան	Ա. Ատենապետ
Թագւոր Քիւլիէլեան	Բ. Ատենապետ
Մաղաք Գ. Պէրպէրեան	Ա. Ատենադպիր
Գէորգ Սարաֆեան	Բ. Ատենադպիր

Ժողովին մէջ խնդիր յարուցուեցաւ թէ Նիւ-Եորքի երեսփոխան Պ. Նշան Զաքեանի տեղ՝ որ բացակայ կը դանուէր, Նիւ Եորքի երեսփոխանները իրաւունք ունի՞ն ուրիշ մը նշանակել : Տրուած լուսարանութիւններէն յայտնի եղաւ, որ Նիւ—Եորքի Թեմական Ժողովը կը բաղկանար միայն տեղւոյն Հոգարարձութենէն եւ Նիւ Եորքի երեսփոխանները բացարձակ մեծամասնութիւն կը կազմէին, հոգարարձութեան եւ իրենց բացակայ ընկերներուն հաւանութիւնն ալ ունէին, որով կրնային Պարոն Նշան Զաքեանի տեղ մէկը նշանակել :

Յետոյ առ ի տեղեկութիւն կարդացուեցաւ Յու-

լիս 29ի Երեւափ . Ժողովին արձանագրութիւնը :

Ժողովն ապա անցաւ իր օրակարգին :

Ա. — ԿԵԴՐ . ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1917 Յուլիս 29ի Երեւափ . Ժողովին կողմէ նախորդ Կեդր . Վարչութեան շրջանը լրացնելու համար ընտրուած Կեդր . Վարչութիւնը ներկայացուց իր ութամսեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը որ կը պատկերացնէր Կ . Վարչութեան ութամսեայ գործունէութիւնը Առաջնորդարանի թեմական վարչական եւ ելեւմտական ընթացիկ գործերուն մէջ . եւ կը տեղեկագրէր Երեւափոխանական Ժողովէն ընտրուած Հաշտարար Մարմնոյ կատարած աշխատութիւնները եւ փորձերը , որոնք կը վերաբերէին 1917 , Փետր . 18ի Երեւափ . Ժողովի որոշմանց դէմ առարկող երեւափոխաններուն հետ՝ առանց օրէնքէն շեղելու՝ հասկըցողութիւն մը գոյացնելու խնդրոյն : Սակայն այս մասին կատարուած աշխատութիւնները անհետեւանք մնացած ըլլալով , Կեդր . Վարչութիւնը հրահանգ տուած էր նոր երեւափոխաններու ընտրութեան եւ Երեւափ . Ժողովի գումարման :

Կեդր . Վարչութեան այս Տեղեկագիրը լսելէ վերջ , Երեւափ . Ժողովը շնորհակալութիւն յայտնեց Գեր . Տ . Բարգէն Եպիսկոպոսին եւ Տ . Շահէ Մ . Վ . ին իրենց Տեղապահական խղճամիտ պաշտօնավարութեան , եւ Կեդր . Վարչութեան՝ իր ութամսեայ բարւոք ծառայութեան համար :

Բ.—ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Սահմ. Վերաքննիչ Յանձնաժողովոյ Տեղեկա-
դիրը ներկայացուց Գեր. Տ. Բարդէն Սրբազան եւ
կարդաց հիմնական սկզբունքներն, որոնց համեմատ
տեղի պիտի ունենային բարեփոխութիւնք: Ժողովը
որոշեց յօդուած առ յօդուած կարդալ առաջարկուած
փոփոխութիւններն եւ վիճարանութեան ենթարկե-
լէ յետոյ վաւերացնել:

Ժողովը փակուեցաւ ժամը 2ին, Բ. Նիստը ժամը
3ին բանալու որոշումով:

ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Երեսփ. Ժողովոյ Բ. Նիստը բացուեցաւ կէսօրէ
ետք ժամը 3,30ին, նախադասութեամբ Տեղապահ
Գեր. Տ. Շահէ Վ.ի եւ Ատենապետութեամբ Տիար
Մարկոս Տ. Մանուէլեանի եւ ՅԱ երեսփոխաններու
ներկայութեամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գեր. Տ. Բարդէն Սրբազան մի առ մի կարդաց
վերաքննուած Սահմանադրութեան յօդուածները ո-
րոնք վիճարանութեան ենթարկուելէ յետոյ հարկ
դատուած փոփոխութիւններով եւ յաւելումներով
վաւերացուեցան: Վերջին յօդուածը որ կը վերա-
բերէր ընտրող եւ ընտրելի ըլլալու հանդամանքնե-

ըուն, երկար վիճարանութեանց նիւթ եղաւ, եւ որոշուեցաւ վիճարանութեան շարունակութիւնն եւ այդ յօդուածին վերջնական ձեւին վաւերացումը յետաձգել յաջորդ նիստին:

Գ.—ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ժողովը ձեռնարկեց Կեդր. Վարչութեան ընտրութեան: Դիւանին կողմէ նշանակուեցաւ Մասնախումբ մը բաղկացած Տիարք Ն. Կիւմիւշկէրտանեանէ, Ա. Պ. Սէլեանէ եւ Վ. Քիւրքճեանէ՝ Տնտեսական Ժողովոյ ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստելու համար: 10 վայրկեան դադարէ մը յետոյ ժողովը վերաբացուեցաւ: Մասնախումբը ներկայացուց հետեւեալ եռապատիկ ցանկը.

Մ. Տ. Մանուէլեան	Գէորգ Թովմաճանեան
Արմենակ Նազարէթեան	Մ. Գ. Պէրպէրեան
Տոքթ. Յ. Գալուստեան	Ա. Պ. Սէլեան
Խոսրով Էլմասեան	Գարեգին Մանուկեան
Առաքել Եազըճեան	Տիգրան Էքմէքճեան
Պասլա Սալընեան	Նիկողոս Խաչմանեան
Սարգիս Աղամեան	Աւետիս Տէրոյենց
	Գէորգ Սրապեան

Վերոյիշեալ ցանկին վրայ դադանի քուէարկութիւն կատարուեցաւ: Ընտրութեան մասնակցեցան 34 երեսփոխաններ եւ Տնտեսական Ժողովոյ անդամ ընտրուեցան՝

	Քուէ
Մ . Գ . Պէրպէրեան	24
Ա . Նաղարէթեան	18
Ա . Պ . Սէլեան	17
Մ . Տ . Մանուէլեան	16
Խ . Էլմասեան	15

Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն եղան՝	
Տոքթ . Գալուստեան	12
Գ . Թովմաճանեան	11
Տ . Էքմէքճեան	11

Իսկ Կրօն . Ժողովի անդամ ընտրուեցան՝

Պոսատնի Հովիւ Տ . Շահէ Ծ . Վ . Գասպարեան	
Ուսարի Հովիւ Տ . Եղիշէ Քհնյ . Գալչընճեան	
Լօվէլի Հովիւ Տ . Գաւիթ Քհնյ . Տ . Աւետիսեան	
Ֆիլատէլֆիոյ Հովիւ Տ . Պետրոս Քհնյ . Վարդանեան	

Կրօն . Ժողովի Ե . րդ անդամութեան համար իրաւունք արուեցաւ նորընտիր Վարչութեան Երեսփ . Ժողովի անունով հրաւիրել յարմարագոյն թեմի մը հովիւը :

Դ . — ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ժողովը գոհունակութեամբ լսեց Հայ Ազգ . Միութեան Կեդր . Մարմնոյն անդամակցող Հայց . Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն կողմէ արուած տեղեկութիւնները իրենց պաշտօնավարութեան եւ Հայ Ազգ . Միութեան աշխատութեանց նկատմամբ՝ շը-

նորհակալութիւն յայտնելով, ընդունեց անոնց հըրաժարականը: Թեր ու դէմ կարծիքներու փոխանակութենէ մը յետոյ Նի դէմ ՅԱ քուէով որոշեց, որ Հայ Ազգային Միութեան ներկայացուցիչները ընտրուին Երեսփ. Ժողովոյ կողմէ եւ ենթարկուին Կեդր. Վարչութեան իրաւասութեան:

Ներկայացուցիչներու ընտրութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Նիստը փակուեցաւ ժամը Տին, հետեւեալ օրը ժամը Գին վերաբացուելու որոշումով:

ՆԻՍՏ ԵՐՐՈՐԴ

Նիստը բացուեցաւ Ապրիլ 8 Երկուշաբթի օրը, առաւօտեան ժամը Գ. 15ին, նախադահութեամբ Առաջն. Տեղապահ Գեր. Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեանի, եւ Ատենապետութեամբ Տիար Մարկոս Տ. Մանուէլեանի: Ներկայ էին 27 երեսփոխաններ:

Բացման աղօթքն ըրաւ Գեր. Տ. Բարդէն Եպս.:

Կարդացուեցան եւ վաւերացուեցան նախորդ երկու նիստերուն արձանագրութիւնները:

ՆԱԽՈՐԴ ՆԻՍՏԷՆ ՄՆԱՅԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա.—ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Վերաքննուած Սահմ. թեան վերջընթեր յօդուածը երկար վիճարանութիւններէ յետոյ, կարգ մը

փոփոխութիւններով վաւերացուեցաւ 1-ի դէմ 26 քուէով :

Որոշուեցաւ սոյն յօդուածին կցել խոստմնագիր մը , վարչական ժողովներու անդամոց համար— երեսփոխան , վարչութեան անդամ , հոգարարձու եւն .— բոլոր անոնք , որ ուէ պաշտօնի կ'ընտրուին կամ կը հրաւիրուին , պարտաւոր պիտի ըլլան ստորագրել այդ խոստմնագիրը :

Սահմանադրութեան վերաքննուած յօդուածները դարձեալ կարգացուեցան եւ իրենց ամբողջութեամբ վաւերացուեցան :

Երեսփ. ժողովէն վերաքննուած Սահմանադրութեան գլխաւոր կէտերը հետեւեալներն են .

1.—Երեսփ. ժողովը պիտի վերածուի մնայուն մարմնոյ մը , որուն մէկ երրորդը ամէն տարի նոր ընտրութիւններով պիտի նորոգուի . բայց ժողովը չի լուծուիր երբեք :

2.—Քաղաքիկ նիստերէ զատ՝ Երեսփ. ժողովը պիտի ունենայ ամէն տարի Տարեկան կանոնաւոր Նիստ մը , լսելու Առաջնորդին եւ Վարչութեան Տարեկան Տեղեկագիրը . ընտրելու Երեսփ. ժողովին միամեայ դիւանը եւ վաւերացնելու Առաջնորդարանի պիւտձէն :

3.—Առաջնորդի պաշտօնավարութեան շրջանը պիտի վերածուի երեք տարիի , զոր աւարտելէ յետոյ Առաջնորդը պէտք է ժողովին մատուցանէ իր հրաժարագիրը :

Առաջնորդի գործունէութեան Տարեկան Տեղեկագիրները պիտի ենթարկուին գնահատութեանը

Երեսփի . Ժողովի՝ սրուն հաւանութեամբ միայն պիտի կրնայ շարունակել իր պաշտօնը :

Ճշտուած են Առաջնորդի հրաժարեցուցման պայմանները :

4 .— Կեդր . Վարչութեան Տնտեսական Ժողովին անդամները եւ տեղական Հոգարարձութիւնք պիտի ընտրուին երեք տարուան շրջանի մը համար . բայց շրջան մը պաշտօնավարող անդամներ յաջորդ մէկ շրջանին համար վերընտրելի չեն :

5 .— Ժողովը ջնջեց եկեղեցւոյ անդամակցութեան եւ ընտրութեանց մասնակցելու համար պահանջուած ԵՐԿՈՒ ՏՈՒԱՐԻ տուրքը : Անոր տեղ հաստատեց խոստումով երաշխաւորուած տարեկան կամաւոր նուիրատուութիւնը՝ տեղական պայմաններու համեմատ , եւ սահմանեց միջոցներ , որոնցմով Հայց . Եկեղեցւոյ օրինաց հաւատարիմ եղողներ պիտի կրնան ընտրող եւ ընտրելի ըլլալ եկեղեցւոյ վարչական գործերուն :

6 .— Հայ կանանց եւս իրաւունք տրուեցաւ , եկեղեցւոյ վարչական գործերուն մէջ , Չ՛լ տարեկանէն վեր ընտրող եւ ընտրելի ըլլալու :

7 .— Հովուական եւ Առաջնորդական նոր թեմերու կազմութիւնը , կամ արդէն գոյութիւն ունեցող թեմերուն կցումը կամ անջատումը , պիտի վաւերացուի Երեսփի . Ժողովէն :

Ժողովը Յի դէմ Չ՛լ ձայնով որոշեց որ Վերաքրննուած եւ Բարեփոխուած Սահմանադրութիւնը գոր-

ճաղրութեան դրուի Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետէն հաստատուելէ յետոյ, համաձայն Ա-
մերիկայի Հայոց Սահմ. թեան 90րդ յօդուածին :

Դ.—ՀԱՅ ԱԶԳ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Դիւանը նշանակեց երեք հոգիէ մասնախումբ մը
բաղկացած Տիար Վ. Քիւրքճեանէ, Արամ Ճերահ-
եանէ, եւ Ն. Ս. Կիւմիւշկէրտանեանէ, որոնք պատ-
րաստեցին եւ ներկայացուցին ընտրելեաց հետեւեալ
եռապատիկ ցանկը .

Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեան

Մարկոս Տ. Մանուէլեան

Մաղաք Գ. Պէրպէրեան

Տոքթ. Գալուստեան

Ա. Ն. Նազար

Ա. Պ. Սէլեան

Գարեգին Մանուկեան

Խոսրով Էլմասեան

Կարապետ Յ. Գարակիւլեան

Այս ցանկին վրայ դադանի քուէարկութիւն կա-
տարուելով ընտրուեցան .

Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեան

23

Մ. Տ. Մանուէլեան

21

Ա. Ն. Նազար

12

Յաջորդ առաւելագոյն քուէ շահողն էր՝

Մաղաք Գ. Պէրպէրեան

9

Ժողովը միաձայնութեամբ որոշեց այս չորս անունները ներկայացնել Հայ Ազգ. Միութեան Կեդր. Մարմնոյն, որոնցմէ երեքը պիտի մասնակցին ժողովոյն աշխատութեանց: Ներկայացուցիչներու պաշտօնավարութեան շրջանը պիտի տեւէ մէկ տարի եւ պարտաւոր են գրաւոր տեղեկագիր ներկայացնել Երեսփ. Ժողովոյ:

Ե.—ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ժողովը կարծիքներու փոխանակութենէ մը յետոյ միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Նկատելով որ Վերաքննուած Սահմանադրութիւնը Վեհ. Հայրապետին պիտի մատուցուի վաւերացման համար, Առաջնորդը Վերաքննեալ Սահմանադրութեան համեմատ ընտրելու համար, որոշուեցաւ ընտրութիւնը յետաձգել յաջորդ Երեսփ. Ժողովոյ»:

Զ.—ՔԱՂԻՓՈՐՆԻԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԽՆԴԻՐ

Քաղիֆօրնիոյ Հայց. Առաք. Եկեղեցւոյ բոլոր թեմերը 1917ին մասնաւոր պատգ. Ժողով գումարելով Ֆրէզնոյի Եկեղեցւոյն մէջ, առանձին առաջնորդութիւն մը հաստատելու նպատակաւ խնդիր մատուցած են Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին: Ն. Ս. Օծութիւնը Քաղիֆօրնիոյ Հայ գաղութին այս

փափաքը նկատի առած եւ 1917 Յունիս 20 թուակիր
 եւ 1090 համարաւ դիւանական պաշտօնագիրով Ե-
 րեալի . Ժողովիս յանձնած էր խնդիրը ԲԱՐՈՅԱԿԱՆ ,
 ՎԱՐՉԱԿԱՆ եւ ՏՆՏԵՍԱԿԱՆ տեսակէտներէ ուսում-
 նասիրել եւ արդիւնքը տեղեկագրել Ս . Էջմիածին՝
 վերջնական տնօրինութեան համար : Միեւնոյն ժա-
 մանակ յանձնարարած էր որ Քալիֆորնիոյ կողմէ
 յատուկ պատգամաւոր մը ներկայ գտնուի Երեալի .
 Ժողովոյ նոյն նիստին եւ պարզէ առանձին առաջնոր-
 դութիւն մը հաստատելու պէտքն ու անհրաժեշտու-
 թիւնը :

Փրէզնոյի Երեալոխան եւ Քալիֆորնիոյ մասնա-
 ւոր պատգամաւոր Տիար Վահան Քիւրքճեան խօսք
 առաւ եւ կարգաց այն ընդարձակ պաշտօնագիրը՝
 որ Քալիֆորնիոյ թեմերուն կողմէ ուղղուած էր Վեհ .
 Հայրապետին : Յետոյ թուեց այն օգուտներն , որ
 յառաջ պիտի գային առանձին Առաջնորդութեան մը
 հաստատումէն : Ժողովը նկատի ունենալով Քալիֆոր-
 նիոյ Հայոց ընդհանուր բաղձանքը եւ առանձին Ա-
 ռաջնորդութեան համար հարկ եղած բարոյական եւ
 նիւթական զոհողութեանց յանձնառութիւնը , միա-
 ձայնութեամբ համամիտ գտնուեցաւ որ շուրջ 3000
 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Քալիֆորնիոյ
 թեմերը՝ առանձին Առաջնորդութիւն մը կազմեն եւ
 որոշեց ըստ այնմ տեղեկագրել Վեհ . Հայրապետին :

Է.—ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա.—Երկսեռ Երգեցողութիւն.—Լօվէլի Հովիւին
 եւ կարգ մը Երեալոխաններու կողմէ բերուած ա-

առջարկին վրայ՝ Ժողովը նկատի առաւ Ամերիկայի
Հայց. Առաք. Եկեղեցիներու մէջ երկսեռ երգեցո-
ղութեան խնդիրը եւ նկատի ունենալով որ երկսեռ
դպրաց խումբերու կազմութիւնը եւ պաշտամանց
մասնակցութիւնը հակառակ չէ Հայց. Եկեղեցւոյ
ոգւոյն եւ սովորութեանց, որոշեց որ անարգել շա-
րունակուին :

Բ.—Եկեղեցիներու Բարեկարգութիւնը.—Տիար
Վ. Քիւրքճեան առաջարկեց Յանձնախումբ մը կազ-
մել, Հայց. Եկեղեցւոյ ներքին բարեկարգութեան,
կանոնաւորութեան եւ պայծառութեան համար ծը-
րագիր մը մշակելու եւ կեդր. Վարչութեան ներ-
կայացնելու համար: Այս առաջարկը ընդունուեցաւ
միաձայնութեամբ եւ Յանձնախումբի անդամ նշա-
նակուեցան Տիարք Վ. Քիւրքճեան, Գ. Սարաֆեան
եւ Ն. Կիւմրիւշկէրտանեան :

Գ.—Հայ Ազգ. Միութեան Մասնաճիւղերուն մօտ
Հայց. Եկեղեցւոյ ներկայացուցիչներու ընտրութեան
խնդիր.—Պոստոնէն կարգ մը ազգայիններու մէկ
գրութիւնը կարդացուեցաւ, եւ խնդիրը սկզբունքի
տեսակէտէ միայն նկատի առնուելով, առաջարկ-
ուեցաւ եւ ընդունուեցաւ որ Հայ Ազգ. Միութեան
տեղական մասնաճիւղերուն Հայց. Եկեղեցիին ներ-
կայացուցիչներն ընտրուին Հոգարարձութեանց կող-
մէ :

Դ.—Բրավիտէնսի Բողոքը.—Կարդացուեցաւ
Բրավիտէնսէն կարգ մը ազգայիններու ստորագրու-
թեամբ բողոքագիր մը տեղւոյն Հոգարարձութեան

դէմ, եւ յանձնուեցաւ նորրնտիր Կեդր. Վարչութեան
ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն:

Գ.—Նիստի արձանագրութիւնը կարգացուեցաւ
եւ վաւերացուեցաւ:

Նիստը փակուեցաւ ժամը 2.30ին տէրունական
աղօթքով:

Ի Դիմաց Ամերիկահայ Երեսփ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Մ. ՏԷՐՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Նախագահ

ՇԱՀԷ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ուստր, Ապրիլ 8, 1918

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

(Տրուած 1918 Ապրիլ 7ին Ուսար գումարուած
Երեսփոխանական Ժողովին)

Տեարք Երեսփոխանք,

Վարչութիւնս ընտրուեցաւ եւ պաշտօնի կոչուեցաւ Երեսփ. Ժողովոյ վերջին նիստին մէջ, 1917 Յուլիս 29ին, շարունակելու եւ լրացնելու համար նախորդ վարչութեան շրջանը, մինչեւ յաջորդ Երեսփ. Ժողովոյ գումարումը:

Վարչութիւնս իր այս ժամանակաւոր պաշտօնավարութեան միջոցին, բացի Առաջնորդարանի ընթացիկ եւ սովորական գործերէն, երկու գլխաւոր գործեր ունէր կատարելիք:

Առաջին՝ Տեղապահի ընտրութիւն, եւ երկրորդ՝ Երեսփ. ընտրութիւն:

Վարչութիւնս այս երկու գործերուն ալ անմիջապէս ձեռնարկեց, հետեւելով Երեսփ. Ժողովոյ կարգադրութեան:

Այդ կարգադրութիւնը սա էր.— Ինչպէս որ յայտնի է, 1917 Փետր. 18ի Երեսփ. Ժողովէն ի վեր կարդ մը Երեսփոխանք, հակառակ ժողովական կանոններու, միշտ առարկեցին Երեսփ. Ժողովոյ մեծամասնութեամբ տուած որոշումներուն եւ ըրած կարգադրութիւններուն: Իսկ 1917 Յուլիս 29ի Ե-

րեսափ . Ժողովը , նկատի ունենալով մեր համազգային ցաւն ու սուգը , ուզեց որ այդ առարկողներն ալ սիրաշահի եւ ամենուն հաճութեամբ ու համաձայնութեամբ ընտրուի թէ՛ Տեղապահը եւ թէ՛ Երեսփոխանութիւնը : Եւ այս նպատակով ալ նշանակեց Հաշտարար Մարմին մը , որուն պաշտօն տուաւ համաձայնութեան գետին մը գտնել , առանց ստնակոխ ընելու Սահմանադրութեան սկզբունքները :

Վարչութիւնս իրաց այս վիճակին մէջ խնդրեց Տեղապահ Սրբազանէն շարունակել իր պաշտօնը , որմէ հրաժարած էր 1917 Յուլիս 29ի Երեսփ . Ժողովոյ մէջ , մինչեւ որ Հաշտարար Մարմինը աւարտէր իր գործը : Սրբազանը պնդեց իր հրաժարականին վրայ , բայց Առաջնորդութիւնը անգործութեան չի դատապարտելու համար հաւանեցաւ «Վասն Տեղապահի» վարել գործերը :

Վարչութիւնս այս պայմաններու տակ գրադեցաւ իր ընթացիկ գործերով , եւ սպասեց Հաշտարար Մարմնի աշխատութեան ելքին : Եւ ինչպէս որ կը հասկցուի այս տեղեկութիւններէն , հակառակ իր բաղձանքին , չկրցաւ ծառայել պէտք եղած չափով եւ կերպով : Եւ այս պատճառով ալ Վարչութեանս տեղեկագիրը պիտի ըլլայ շատ ամփոփ :

Ա .—Վարչութեան Ժողովները

Վարչութեանս Կրօնական եւ Տնտեսական Ժողովները զատ զատ նիստեր չըրին , այլ միշտ միասին խորհրդակցեցան եւ գործեցին , ընելով միայն վեց նիստ :

Վարչական գործերու կարգէն կը յիշենք հետեւեալները .

1) Առաջնորդարանի բացում : Գիտէք որ հրատարեցուցուած Առաջնորդ Գեր . Տ . Արսէն Ծ . Վ . Վեհունի , Առաջնորդարանը փակած եւ Առաջնորդարանի վերաբերեալ ամէն բան կամ փականքի տակ դրած , կամ վերցուցած , կամ միասին առած եւ իր ազարակը տարած էր :

Վարչութիւնը յանձնախումբ մը դրկեց Արսէն Վրդ . ին , խնդրելով որ Առաջնորդարանի բանալիներն ու գոյքերը յանձնէ Վարչութեանս : Արսէն Վրդ . մերժեց եղած դիմումը , չճանչնալով Վարչութիւն եւ Տեղապահ : Այս մերժումին վրայ Առաջնորդարանը բացուեցաւ Ուստրի սլտ . Հոգարարձութեան խնամքով եւ դրուեցաւ օրինաւոր իշխանութեան տրամադրութեան տակ : Բայց պահարաններ եւ գլրոցներ փակ կը մնան դեռ :

2) Առաջնորդութեան ելեւմուտքը : Այս մասին տրուած որոշումը կարելի չեղաւ գործադրել . վասն զի դրամ չկար մէջ տեղ : Երեսփ . Ժողովը 1917 Յուլիս 29ին պաշտօն տուած էր Տեղապահ Սրբազանին , որպէս զի պահանջէր Տոքթ . Փ . Աղամեանի քով դրուած Առաջնորդարանին վերաբերեալ դրամը : Պահանջը եղած է , բայց Տոքթ . Փ . Աղամեան մերժած է յանձնել , չճանչնալով Վարչութիւն եւ Տեղապահ :

Հարկ եղաւ մէկ կողմէն մասնաւոր դիմումներընել բարեսէր անձերու ու միւս կողմէն ալ պահանջել թեմերէն , որպէս զի հասցնեն իրենց օրինական

պարտքերը, եւ այսպէս կարելի եղաւ մաս մը վրաս
հայթայթել առօրեայ անհրաժեշտ ծախքերը հողա-
լու համար:

3) Սահմանադրութեան վերաքննութիւնը, Ե-
րեւի. Ժողովոյ որոշման համեմատ, յանձնուեցաւ
Յանձնաժողովի մը, որ կատարեց իր պաշտօնը, եւ
իր աշխատութեան արդիւնքը առանձինն տեղեկա-
գրութիւնով պիտի ներկայացնէ այսօր պտ. Ժողովիդ,
օրակարգի համեմատ:

Բ.—Հաշտարար Մարմին

Կը ցաւինք յայտարարել, որ Հաշտարար Մար-
մինի ջանքերն ի դերեւ ելան, հակառակ իր դիջում-
ներուն: Վասն զի առարկողներ այնպիսի պայմաններ
դրին, որ հակառակ էին Սահմանադրութեան սկզբ-
բունքներուն, եւ օր մըն ալ՝ պատրուակ բռնելով
թէ Հաշտարար Մարմինը արագ չի գործեր, յայտա-
րարեցին թէ այլեւս չեն ուզեր բանակցիլ: Իսկ ոչ-
պաշտօնապէս, բայց հաւաստեալ, ըսին՝ թէ չէին
ուզեր բանակցիլ, որովհետեւ էջմիածնէն հրահանգ
եկած է Արսէն Վրդ.ին, որ Կրօն. Ժողովոյ միջոցաւ
ի նիստ հրաւիրէ Երեւի. Ժողովը, եւն.:

Գ.—Տեղապահի Ընտրութիւնը

Վարչութիւնս նկատի առնելով, որ առարկող-
ները սիրաշահելու համար Հաշտարար Մարմնի կող-
մէն ձեռք առնուած միջոցները ապարդիւն եղան եւ

Ժամանակի կորուստ պատճառեցին, որոշեց կատարել սահմանադրապէս իր վրայ դրուած պարտականութիւնը, եւ Տեղապահ ընտրեց Պոստոնի թեմին Հովիւ Գեր. Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեանը, որպէսզի օր առաջ հրահանգ տրուի թեմերուն նոր երեսփոխաններու ընտրութեան համար, քանի որ ժամանակը կ'անցնէր:

Գեր. Շահէ Վրդ., ուրախ ենք որ յանձն առաւ այս ծառայութիւնը, տուաւ ընտրութեանց հրահանգը թեմերուն, եւ թէեւ որոշուած էր Յունուարի մէջ աւարտել դոնէ ընտրութիւնները եւ ի նիստ հրաւիրել պատ. Ժողովը, բայց արագ չեղան ընտրութիւնները, եւ այսպէս հազիւ կարելի եղաւ նորընտիր յարգելի Երեսփոխանները այսօրուան համար հրաւիրել ի նիստ:

Գ.—Վարչական Դժուարութիւնք

Վարչութիւնս ուրախութեամբ կը տեղեկագրէ, թէ բոլոր թեմեր հաւատարիմ մնացին Սահմանադրութեան, հակառակ առարկողներու տխուր ազդեցութեան, եւ աշխատեցան կատարել իրենց սահմանադրական պարտականութիւնները հանդէպ Առաջնորդարանի, եւ այսօր այսչափ երեսփոխաններու ներկայութիւնը կը հաստատէ այս իրողութիւնը: Բայց խորին ցաւօք կը յայտարարենք նաեւ, թէ դանուեցան Հողարարձութիւնք, որ անտես ըրին իրենց տրուած հրահանգները, եւ իբրեւ առարկողներ, չուզեցին ճանչնալ օրինաւոր իշխանութիւնը, եւ հետեւաբար չկատարեցին իրենց սահմանադրա-

կան պարտականութիւնները հանդէպ Առաջնորդարանիս :

Մասնաւորապէս պարտք կը համարենք պտ . Ժողովոյդ ուշադրութիւնը հրաւիրել տղեղ ձեռնարկի մը վրայ , որով այդպիսի քանի մը Հոգաբարձութիւններ , Նիւ Եորքի նախորդ Հոգաբարձութեան առաջնորդութեամբ փորձեցին ի դերեւ հանել Երեսփ . Ժողովոյ բոլոր աշխատութիւնները , իբրեւ ապօրէն հռչակելով անոր տուած որոշումները 1917 Փետր . 18ին , եւ այս նպատակաւ Ժողով ըրին , 1917 Սեպտ . 3ին , Նիւ Եորքի Ս . Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ , սուտեր յերիւրեցին , եւ նոյն իսկ յանդիմանեցան Ամենայն Հայոց Վեհ . Հայրապետին հեռագրել այդ բոլորը , եւ ետքը զանոնք հրատարակեցին տպագրութեամբ «ՅԱՅՏԱԳԻՐ Ամերիկահայ Սահմանադրութեան Օրինաց Հնագանդ Հոգաբարձութեանց Խորհրդակցական Ժողովին» խորագրին տակ , որուն մէկ օրինակը ահաւասիկ կը ներկայացնենք պտ . Ժողովիդ :

Բայց կը փութանք յայտարարել նաեւ , որ այս փորձը եւս ոեւէ օգուտ չբերաւ իր հեղինակներուն :

Ե .— Հայրապետական Դիւանէն հասած

Պաշտօնագիրներ

Առարկող երեսփոխաններու կողմը չուղեց ճանչնալ 1917 Փետր . 18ի Երեսփ . Ժողովոյ որոշումներն ու կարգադրութիւնները այն առարկութեամբ , թէ Վեհ . Հայրապետը չէ ընդունած Արսէն Վրդ . ին հրատարականը եւ պաշտօնագրով մըն ալ հրամայած

է անոր շարունակել իր պաշտօնը : Սօսեցաւ նոյն-
պէս ուրիշ պաշտօնագիրներու մասին , որոնք էջ-
միածնէն եկած պիտի ըլլան Արսէն Վրդ.ի հասցէին :

Վարչութիւնս դժբախտաբար չգիտեր , թէ ի՞նչ
իրաւամբ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան կամ
Առաջնորդին հասցէով եկած գրութիւններ բարձի
թողի կ'ըլլան Արսէն Վրդ.ի կողմէն : Բայց այն շատ
խօսուած առաջին պաշտօնագրին պատճէնը Հայրա-
պետական Դիւանէն ղրկուած է Բարգէն Սրբազա-
նին , այն հասկըցողութեամբ՝ որ պատերազմի պատ-
ճառաւ թղթակցութիւնք դժուարացած են , շատ մը
գրութիւնք կորսուած , հետեւաբար նախապէս ղրկ-
ուած պաշտօնագրի մը պատճէնն ալ ղրկած են , որ-
պէս զի միոյն կորստեան պարագային , միւսը ծառա-
յէ իր նպատակին :

Արդ՝ Բարգէն Սրբազան այդ նշանաւոր պաշ-
տօնագրին իր հասցէով եկած պատճէնը յանձնած է
Վարչութեանս , եւ մենք զայն ահա՛ կը դնենք պտ-
ժողովոյ սեղանին վրայ : Այդ պաշտօնագիրը կա-
րելոր է , որ կ'ըսէ Արսէն Վրդ.ին , եթէ հրաժարիլ
կ'ուզես պաշտօնէ , հրաժարականդ տուր Երեսփ. Ժո-
ղովին եւ ոչ թէ Վեհ . Հայրապետին , որ պատճառ
մը չունի այդ հրաժարականը ընդունելու :

Կ'արժէ նաեւ ուշադրութիւն դարձնել հետաքրք-
րական երեւոյթի մը :

1917 Փետր . 18էն ի վեր կատարուած գործերու
մասին հեռագիրներ տրուած էին Ս . էջմիածին , տե-
ղեկագիրներ ղրկուած , նամակներ գրուած , բայց
բոլոր ասոնք մնացեր էին անպատասխանի : Միւս

կողմէն Ս. Էջմիածնէն գրութիւններ կուղային Արսէն Վրդ.ի առաջնորդական հասցէին: Արդ՝ առարկողներ այս երեւոյթը կը մեկնէին ըսելով, թէ «Ուրեմն Վեհ. Հայրապետը չէ վաւերացուցեր Երեւի. Ժողովին որոշումները, քանի որ Էջմիածնի նամակները Արսէն Վրդ.ի հասցէով կուղան», թէեւ այս նամակները սեւէ կապ չունին 1917 Փետր 18ի Երեւի. Ժողովի գործերուն հետ:

Ահա՛ Վեհ. Հայրապետի Դիւանէն, Կաթողիկոսարանի վերաբերեալ յանձնարարութեամբ, պաշտօնագիր մըն ալ, թիւ 1930 եւ 1917 Նոյ. 21 թուակիր, հասած է «Գեր. Տ. Բարգէն Եպս.ին Տեղապահի Առաջնորդութեան Ամերիկայի», որ ցոյց կուտայ որ թէեւ պատերազմի պատճառով թղթակցական եւ հեռագրական յարաբերութիւնք դժուարացած են, բայց Էջմիածին տեղեկացած է 1917 Փետր. 18ին Երեւի. Ժողովոյ մէջ արուած որոշման արդիւնքին եւ ճանչցած է դայն:

Տեարք Երեւիոխանք,

Ահա ինչ որ կրնայինք տեղեկագրել Ձեզ մեր պաշտօնին բերմունքով:

Վարչութիւնս ատեն եւ միջոց չունեցաւ զբաղելու Ուսմնին. Սորհուրդ կազմելու: Իսկ եկեղեցական պատրաստելու ձեռնարկին մասին հարկ եղած տեղեկութիւնը կուտայ Բարգէն Սրբազան, որուն յանձնուած է այս գործը:

Վարչութիւնս շատ դժուարին պայմաններու

մէջ կոչուեցաւ ծառայութեան այս պաշտօնին, որ վերջ կը գտնէ այսօր մեր այս տեղեկագրով:

Մեր խօսքը վերջացնելու ատեն պարտք կ'զգանք յայտարարել, թէ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան գործերուն ամէնէն դժուարին մասերը ծանրացան մեր պաշտօնավարութեան միջոցին, նախ Գեր. Բարդէն Սրբազանի եւ ետքը՝ Գեր. Տ. Շահէ Մ. Վ. Գասպարեանի ուսերուն վրայ: Որովհետեւ մեր պաշտօնավարութեան ութը ամիսներուն մէջ մենք միայն վեց անգամ նիստ ըրինք եւ զբաղեցանք Առաջնորդութեան գործերով, բայց անոնք ամէն օր, իւրաքանչիւրն իր շրջանին, աշխատեցան եւ ըրին լաւագոյն կերպով ինչ որ կարելի էր ընել:

Կը յուսանք, թէ պտ. Ժողովը այսօր իր իմաստուն կարգադրութիւններով եւ իր կատարելիք ընտրութիւններով այնպէս մը պիտի լրացնէ եւ պիտի ապահովէ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան վերակազմութեան խնդիրը, որ այս մեծ գաղութը կարող ըլլայ վայելել ատոնց արդիւնքը:

Ի Դիմաց Կեդր. Վարչութեան

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՂԻՇԷ ՔՀ. ԳԱԼՉՆՃԵԱՆ

ՊԱՏՃԵՆ

Այն պաշտօնագրին, որով Դիւանապետ Տ. Տիրայր Եպիսկոպոս կը պատասխանէ Երեսփ. Ժողովոյ 1917 Օգոստ. 25 թուակիր տեղեկագրին եւ կը հաղորդէ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին հրամաններն ու հրահանգները Տեղապահ Տ. Բարգէն Եպս.ին:

Այդ պաշտօնագիրը, որ գրուած է 1917 Նոյեմ. 3ին, Բարգէն Սրբազանին ձեռքն հասած է 1918 Ապրիլ 9, Գշ. օր:

ԴԻԻԱՆ

**ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Թ. 1842

3 Նոյեմբ. 1917 ամի

Ի Ս. Էջմիածին

Ամերիկայի Հայոց Առաջնորդական Տեղապահ
Փերապատիւ Տ. Բարգէն Եպիսկոպոսին,

Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանով Դիւանս ի պատասխան տարւոյս Օգոստ. 25-ի Ձեր գրութեան յայտնում է, որ Նախ՝ Տ. Արսէն Ծ. Վարդապետի 1916 Թ. Նոյեմբ. 7, N. 1356 հրատարականն ընդունուած է Նորին Ս. Օծութեան կողմից եւ տարւոյս Յունուարի 28-ի N. 177 Դիւանիս գրութեամբ

առաջարկուած է նորան իրաւախոհ լինել եւ ըստ
 պարագայից ընթանալ համերաշխ գործակցու-
 թեամբ, հակառակ պարագային արտօնեց ներկա-
 յացնել իւր հրաժարականը, ըստ Սահմանադրու-
 թեան, Կեդրոնական Երեսփոխանական Ժողովին,
 որպէս զի վերջինս ձեռնարկէ առաջնորդական Տե-
 դապահի ընտրութեան եւ ապա Առաջնորդի ընտրու-
 թեան. Երկրորդ՝ մինչեւ այժմ Առաջնորդի ժամա-
 նակաւոր Տեղապահութեան համար որեւէ գրութիւն
 ստացուած չէ նորին Սրբութեան կողմից, բացի մի
 հեռագրից, որից դժբախտաբար ոչինչ հասկնալ չէր
 կարելի. այդ վերջին գրութեան ստանալուց յետոյ՝
 Առաջնորդական Տեղապահութիւնը յանձին Չեր,
 ընդունուեց նորին Սրբութեան կողմից. Երրորդ՝
 Վեհափառ Հայրապետին հրամանն է, ըստ հնարից,
 փութով ձեռնարկել նոր Առաջնորդի ընտրութեան
 գործին, որպէս զի Ամերիկահայ համայնքը առանց
 Առաջնորդի մնալու վիճակին մէջ չ'մնայ եւ չ'ու-
 ծանայ իւր մայրենի եկեղեցու կարգերից. Չորրորդ՝
 Առաջնորդ ընտրել ըստ Սահմանադրութեան եւ ըստ
 կարգաց Հայ Եկեղեցու, ընտրութեան ցանկի մէջ
 չ'մուծելով Կիլիկիոյ Վանականներին. Հինգերորդ՝
 առաջարկել Տ. Արսէն Ծ. Վարդապետին յանձնել իւր
 մօտ եղած առաջնորդական ամէն տեսակ գործերը,
 հաշիւները, գոյքը եւայլն, որոնք այժմ մնում են
 իւր մօտ. Վեցերորդ՝ աշխատիլ գաղութի բոլոր հա-
 մայնքների եւ եկեղեցիների մէջ համերաշխութեան
 ոգին մտցնել, կապելով Առաջնորդարանի հետ բո-
 լոր համայնքները, հոգաբարձութիւնները, եկեղե-

ցականները եւ եկեղեցիները. Եօթներորդ՝ Սահմա-
 նադրութեան վերաքննութեան ձեռնարկել եւ վերջ-
 նական փոփոխութիւններն առաջարկել ՚ի հաստա-
 տութիւն Նորին Սրբութեան : Յանկալի է, որ Սահ-
 մանադրութեան քննութիւնը լինի նոր Առաջնորդի
 ժամանակ եւ Ամերիկահայ բոլոր համայնքների ներ-
 քին միութիւնը կազմակերպելուց յետոյ, որպէս զի
 փոփոխութեանց ենթարկուած Սահմանադրութիւ-
 նը հանրային կամքի եւ ցանկութիւնների կնիք կրէ
 եւ նոր անհամաձայնութիւնների տեղիք չարուի
 տեղւոյդ ցրուած հայորդիների մէջ, որոնց միասնա-
 կան դործունէութիւնն այնքան անհրաժեշտ է ներ-
 կայիս պարագաներին : Նորին Սրբութեան ջերմ փա-
 փաքն է անհրաժեշտ միութիւնն ու համայնքների
 միացումը տեսնել օր առաջ ՚ի գլուխ եկած յԱմերի-
 կա եւ յոյս ունի, որ պարագաների նոր փոփոխու-
 թեամբ նոր կեանք պիտի ստեղծուի տեղւոյդ համայ-
 նական կեանքում :

Ինչ վերաբերում է այդ տեղ Հայ եկեղեցու պի-
 տանի սպասաւորներ պատրաստելու փափուկ դոր-
 ծին, ապա շա՛տ մեծ դժուշաւորութեամբ, շրջանկա-
 տութեամբ պիտի վերաբերուէք ինչպէս Դուք, նոյն-
 պէս եւ տեղւոյդ եկեղեցական դասն ու համայնքը
 այդ շատ փափուկ խնդրին, դիտենալով թէ ինչ ծանր
 հետեւանքների կարող է տանել անհեռատես ձեռ-
 նարկն : Վեհափառ Հայրապետը վստահ է, որ իր-
 բեւ Եպիսկոպոս Հայ Առաքելական Եկեղեցու միշտ
 եւ միմիայն այդ Եկեղեցու մեծագոյն շահերն ի նը-
 կատի պիտի ունենաք եւ Ամերիկահայ ժողովուրդն

ու եկեղեցին միշտ փարուած պահէք Մ. Աթոռին,
 որի բացակայութիւնը նկատուեց Ձեր ընդարձակ
 շրջաբերականի մէջ, որ ոչ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
 անուան էր յիշուած եւ ոչ ընդհանրական Հայրապե-
 տի, միշտ դուրդուրացողը պիտի լինիք նորա շահե-
 րին եւ սերտ սիրով կապուած նորա Հայրապետի
 հետ. այս հաւատով եւ օրհնում է նորին Սրբութիւ-
 նը Ձեզ եւ Հայ համայնքն ու եկեղեցականները, ա-
 մենքն եւս ի միաբանական գործակցութիւն հրաւի-
 րելով յօգուտ եւ ի պայծառութիւն տեղական եկե-
 ղեցւոյդ եւ ի շահ հանրական գործոյն:

(ստոր.) Դիւանապետ՝ **ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ**



ՊԱՏՃԵՆ

Այն պաշտօնագրին, որով Դիւանապետ Տ. Տիրայր Եպս. կը հաղորդէ Արսէն Վրդ.ին, թէ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը հաստատած է Բարգէն Սրբազանին Տեղապահութիւնը եւ թէ ինքն «ըստ պատուէրի Նորին Սրբութեան» պարտի «նոր ընտրուած Տեղապահին» յանձնել ինչ որ կը պատկանի Առաջնորդարանին :

ԴԻԻԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 1851

3 Նոյեմբ. 1917 ամի

Ի Ս. ԷՋՄԻԱՄԻՆ.

Գերապատիւ Տ. Արսէն Ծ. Վարդապետի Նախորդ
Առաջնորդի Թեմին Հայոց Ամերիկայի

Աչքի առաջ ունենալով այն պարագան, որ Ձեր հրաժարականի հիմամբ, Առաջնորդական Տեղապահ է ընտրուած Ամերիկայի Հայոց Թեմի համար Գեր. Տ. Բարգէն Եպիսկոպոս, որին Նորին Սրբութիւնը բարեհաճեց ճանաչել եւ հաստատել իւր պաշտօնի մէջ, իւր հրահանգները տալով նորա Թեմի գործերը

վարելու համար մինչեւ նոր Առաջնորդի ընտրութիւնը: Հայրապետական Դիւանս, ըստ պատուէրի Նորին Սրբութեան, առաջարկում է Ձեզ յանձնել Ձեզ մօտ գտնուած առաջնորդական բոլոր տեսակի դործերը, թղթերը, մատեանները, դրամական հաշիւները, կարասի եւն., որոնք առաջնորդարանին են պատկանում, նոր ընտրուած Տեղապահին:

Այս մասին գրուած է նաեւ նորան Դիւանին կողմից Նոյեմբ. 3, N. 1842 գրութեամբ:

(Ստոր.) Դիւանապետ՝ ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ



